Շալվա Ամոնաշվիլի

Որտե՞ղ ես, ժպիտ իմ

Խոհեր ուսուցչանոցում

Դպիր» մանկավարժական հանդես

Ով կյանքը ժպիտով է դիմավորում,
Ով երեխային ժպիտով է բարուրում,
Ով դժվարությունները ժպիտով է լուծում,
Ում ժպիտը իմաստունի ճառագայթի է նմանվում,
Նա, արևի նման, ջերմացնում է բոլորին,
Նա ժպիտով է չարին է հաղթում,
Նա մեծագույն գաղտնիքին է տիրապետում:
Ժպիտի էությունը Արարչի ուրախությունն է:
Մարիանա Օզոլինյա

1. Ինչքան ավելի խորն էի ճանաչում երեխաներին և մանկավարժի մասնագիտական կյանքը (իսկ այդ կյանքն անսահման է), այնքան ինձ ավելի զայրացնում էին մանկավարժության դասագրքերը. այնտեղ, չգիտես ինչու, իմ՝ ուսուցչի և իմ աշակերտների նկատմամբ հարգանք և սեր չէի զգում: Դրանցում ես հիմա էլ չեմ տեսնում կյանքում գեղեցիկի հաստատման և կյանքի ճանաչման այնպիսի կրքոտ կոչ, ինչպիսի կրքով իրենք երեխաներն են ձգտում դրանց և նրանց հետ էլ ես:

Այդ դասագրքերում՝ և՛ հին, և՛ ժամանակակից, ավանդական ավտորիտարիզմից կարծրացած որոշ հասկացությունների, ձևերի, սկզբունքների, մեթոդների, օրենքների և նման բաների մասին «գիտական» տեղեկություններ եմ կարդում, որոնք ինձ քաշում են ֆորմալիզմի և անտարբերության, արտաքին բարեկեցության և ցուցամոլության ճահիճը:
Նրանք համառորեն ջանում են իմ գիտակցությունը և ենթագիտակցությունը հակել դեպի բռնությունը, խստությունն ու կոպտությունը: Եվ դա անում են գիտության անունից, որը որևէ առարկություն չի հանդուրժում: Սակայն իմ բազմաթիվ գործընկերների պրակտիկայում տեսնում եմ, թե ինչ անպաշտպան և անհիմն են այդ, կարծես թե գիտականորեն ապացուցված և որոշակիացված դիդակտիկական և դաստիարակչական կմախքները:

Մտածում էի, թե ինչ գիտական մանկավարժություն է, որը ոչ մի բառ չի ասում սիրո, սրտի մասին: Այդպիսի գիտությունն ինձ համար դարձավ ձանձրալի:
Նախկինում ես ինձ բազմիցս հարց եմ տվել, թե ինչու չսիրեցի մանկավարժության և ոչ մի դասագիրք, ինչու եմ ամեն ինչ հակառակն անում, այլ ոչ այնպես, ինչպես թելադրում է երեխաների ուսուցման և դաստիարակության մասին գիտությունը:
Ինչո՞ւ եմ գնում կարծես գիտությանը դեմ:
Մանկավարժության ձեռնարկներից գիտությունը խստորեն հետևում էր իմ կրթական գործունեությանը և խոժոռվում՝ ի նշան դժգոհության և զայրույթի: Բայց սիրտս դառնում էր ավելի ըմբոստ, իսկ մտքերս՝ ավելի անընկալունակ դեպի նրա պատգամներին:

Այն ժամանակ չէի կարողանում բացատրել, թե ինչու է այդպես:

2. Մանկավարժության ձեռնարկներն անկյանք էին նաև հարյուր տարի առաջ: Եվ ինչքան էլ գիտությունն ընդարձակել է իր սահմանները, դրանք այսօր էլ նույնն են՝ մռայլ, չոր, խիստ, կոպիտ, պահանջկոտ և հրամայական, ինքնաբավ և ավտորիտար:

Մանկավարժական գիտությունը, ինձ թվում է, ցնծում է. ցնծում է, որովհետեւ գիտություն է դառնում, այլ ոչ թե որևէ այլ բան: Նա չի ցանկանում բոլոր արվեստներից բարձր արվեստ լինել , բոլոր գիտությունների չափը, հենց կյանքի չափը, մտածողության բարձրագույն, Աստվածային մշակույթը լինել չի ցանկանում. Այս ամենը նա ցածր է համարում իր գիտական արժանապատվությունից: Եվ ինչպես մյուս գիտությունները, որոնց մատերիալիզմի սկզբունքը հոգևորից շատ հեռու են դրել, ինքն իրենով հիանում է:

Ինչո՞ւ պետք է սիրի երեխաներին և հայտարարի իր սիրո մասին: Ո՛չ սիրտը, ո՛չ սերը, ոչ ոգեղենությունը չեն չափվում, նշանակում է՝ նյութական չեն, այսինքն՝ ենթակա չեն գիտական փորձարկումների:

Իսկ ի՞նչ է գիտությունը: Նա բացահայտում է օբյեկտիվ իրականության որոշ օրենքներ, չափում է օբյեկտիվ իրականությունը և այդ ամենի համար օգտվում է այսպես կոչված գիտական տրամաբանությունից, գիտական հասկացություններից և մեթոդներից:
Գիտության սահմանած օրենքներն ընդհանրական են և պարտադիր բոլորի համար: Մի՞թե ավելի լավ չէ գիտություն կոչվել, քան թե մի ուրիշ բան: Եվ մանկավարժական գիտությունն էլ քրտնաջան բացահայտում է օբյեկտիվ իրականության օբյեկտիվ օրենքներ՝ հետևելով գիտական տրամաբանությանը և նյութապաշտական սկզբունքներին, արտածում է վերացական հասկացություններ և դատողություններ:

Այդտեղ ես և իմ աշակերտները փոխակերպվում ենք ինչ-որ հանրահաշվական մեծությունների՝ օրինակ A և B, ինչպես երկու հեծանվորդները (մաթեմատիկայի դասագրքերից), որոնք շտապում են իրար հանդիպելու:
Մանկավարժության արարող և դասական Յան Ամոս Կոմենսկին ասում է, որ մանկավարժությունը («Մեծ դիդակտիկա») բոլորին ամեն ինչ սովորեցնելու համապիտանի արվեստ է: Մանկավարժությունը գիտություն չէ, պնդում է մանկավարժության դասական Կոնստանտին Դմիտրիևիչ Ուշինսկին, այն մարդկությանը հայտնի ամենամեծ արվեստն է:
Բայց այ, մանկավարժության «գիտականացման» ներկայացուցիչները միամիտ ուսուցիչներին կասեն, որ Կոմենսկին և Ուշինսկին գիտական մանկավարժության հիմնադիրներն են:
Ափսոս, որ մանկավարժության մասին իրենց կարծիքը Կոմենսկին և Ուշինսկին չեն կարող մի անգամ ևս հաստատել: Մի անգամ էլ բացատրեն բոլորին, որ մանկավարժությունը գերազանցում է բոլոր գիտություններին և, որ նա ստեղծում է կյանքի նոր մակարդակ:

3. Ես ինձ համար բացահայտել եմ մի ուրիշ մանկավարժական գիտություն՝ նվիրական մանկավարժություն:

Ի՞նչ է նշանակում «գիտություն» [1] բառը: Համեմատեք այն «ականջին» բառի հետ (ռուսերեն՝ На ухо): Դեռ հին ժամանակներում գիտություն անվանում էին այն նվիրական գիտելիքները, որոնք ասվում էին միայն վստահելիներին, փոխանցվում էին ականջին շշնջալով, այսինքն՝ գաղտնի:
Նվիրական մանկավարժական գիտելիքները մարդու համար բացահայտվում են այն չափով, որքանով որ նա ձգտում է դրանց:
Դրանք կտրվեն նրան ենթագիտակցության և զգայական իմացության շնորհիվ:
Սակայն ինտուիցիան և զգայաիմացությունը զոհողություն են պահանջում՝ անշահախնդիր սեր և նվիրվածություն երեխաներին, նրանց հետ շփում իրավահավասարության, ազատության և համագործակցության սկզբունքերով, Բարձրյալի ձգտում:
Եվ եթե մեկն իր համար բացահայտում է այդպիսի նվիրական գիտելիքներ, կփոշիացնի՞ նա դրանք, կառաջարկի՞ ամեն պատահածի:

Չնայած ամեն մեկը չէ, որ կընդունի դրանք. մեկը կզայրանա, մյուսը անվստահություն կցուցաբերի, մեկ ուրիշը կծաղրի:

Բայց չէ՞ որ դրանց մեջ են ճշմարտության հատիկները թաքնված:
Ահա մի նվիրական գիտելիք. «Ոչինչ մի՛ արգելեք երեխաներին, նույնիսկ վնասակարը մի՛ արգելեք»:
Դուք ընդունում եք սա կամ էլ միանգամից կասկածների կարկուտ եք տեղում, ծաղրալից ժպտում եք, սնահավատության անթափանց պատ եք շարում…

Այսպիսով, կարելի՞ է ձեր ընկալմանը («на ухо») վստահել այս գիտությունը:

Նվիրական գիտելիքները յուրահատուկ հատկություններ ունեն. չեն տեղավորվում գրքերի տեքստերում և թեմաներում, այլ գաղտնագրվում են խորը ենթատեքստերում, որտեղ բառերն անուժ են դրանք վեր հանելու և հրապարակելու. պաշտոնական գիտության միջոցներով դրանք ձևակերպման չեն տրվում, սովորական տեսողությամբ չեն երևում: Դրանք հասնում են միայն սրտի միջոցով, ազնվագույն մանկավարժական գրքերի հոգևոր ընթերցանությամբ միայն: Իսկ այդպիսին են, առաջին հերթին, մանկավարժության դասականների գրքերը: Նրանք վաղուց են մեզ հետ վարում վստահելի զրույց վարում «на ухо», բայց դե մենք էլ պետք է սովորենք հոգևոր ընթերցանությունը, որպեսզի լսենք նրանց ուսմունքի խորքերից եկող շշուկը:

4. Ասված է. «Ժպիտը հզորություն է կրում»:
Մեզ ի՞նչ է հայտնի Ժպիտի նվիրականության մասին:

Վերցրեք ձեռքի տակ եղած մանկավարժության բոլոր դասագրքերը և դրանց մեջ փնտրեք «ժպիտ» բառը: Կգտնե՞ք, թե՞ չէ: Վերցրեք մանկավարժական և հոգեբանական բառարաններ և նույն բառը փնտրեք: Չգտա՞ք: Ես նույնպես մանկավարժության գրքերում, բառարաններում, հանրագիտարաններում «ժպիտ» փնտել, սակայն այդպես էլ չեմ գտել:

Միգուցե եզրակացություն անենք, որ Ժպիտն ընդհանրապես մանկավարժական ոչ մի արժեք չունի, դա ո՛չ ուսուցման և դաստիարակության մեթոդ կանվանես, ո՛չ սկզբունք, ո՛չ ուսուցման կամ դաստիարակության օրինաչափություն: Հենց այդ ժամանակ էլ կտեսնենք «պատճառը», թե ինչու դեմքի այդպիսի հոգեբանական արտահայտություն նշանակող այդ բառը տեղ չի գտել ո'չ մանկավարժական, ո'չ հոգեբանական աղբյուրներում:
Երեխաներին ժպտալը ուսուցչի համար թեթևամտություն է:
Խստաբարո մանկավարժական մտածողության ինչի՞ն է պետք այդ բառը, եթե կան այլ բառեր՝ խստություն, պահանջկոտություն, ստուգում, հսկում, ղեկավարում, գնահատական, թեստավորում, բացատրություն, ամրապնդում և այլն: Այստեղ ժպիտի տեղը չէ:
Բայց պատկերացրեք, որ մարդկանց կյանքից անհետացել են բոլոր ժպիտները, պատկերացրեք, որ Բնության մեջ վերացել են բոլոր ծաղիկները. . .

Ինչի՞ կվերածվի այդ կյանքը, Բնությունն ինչպիսի՞ն կլինի:
Մենք դպրոցից վտարում ենք ժպի՞տը:
Մենք ամաչում ենք ժպիտների՞ց:
Դրանք պետքական չե՞նք համարում:
Մենք համարում ենք դրանք վնասակա՞ր:
Ե՞տ ենք վարժվել ժպտալուց:
Այդ դեպքում պետք է անմիջապես փակել դպրոցները, որպեսզի դրանք մահացում չտարածեն իրենց շուրջը:
Կյանքն է Ժպիտ արտահայտում, և ինչպիսի՞ն կլինի այն դպրոցը, որը չի ընդունում ժպիտը, իր ամբողջ տարածքը դրանով չի լցնում:

Ի՞նչ պետք է լինի այն մանկավարժական գիտությունը, որի համար ժպիտը էական հասկացություն չէ:
Ժպիտը մարդկայնացնում է Կյանքը, այն լցնում է Լույսով:
Առանց ուսուցչի ժպիտի աշակերտների կյանքում մարում է իմացումի հրճվանքի լույսը, հալչում են սերը և ձգտումը:
Առանց ժպիտի ուսուցիչն օտար մարդ է աշակերտների շրջանում:

Առակ

Բարձրադիր սարերում մի խուլ գյուղ կար:
Խուլ էր, ոչ թե որովհետև բնակիչներն էին խուլ, այլ մնացած աշխարհն էր խուլ նրանց նկատմամբ: Գյուղի մարդիկ մի ընտանիքի պես էին ապրում: Փոքրերը հարգում էին մեծերին, տղամարդիկ հարգում էին կանանց: Նրանց բառապաշարում չկային վիրավորանք, սեփականություն, ատելություն, դժբախտություն, ողբ, թախիծ, շահամոլություն, նախանձ, երեսպաշտություն բառերը: Այս ու նման բառերը նրանք չգիտեին, որովհետև չունեին մի բան, որ հնարավոր լիներ իրենցը կոչել: Նրանք ծնվում էին ժպիտով ու մինչև իրենց վերջին օրը պայծառ ժպիտը չէր հեռանում դեմքներից:
Տղամարդիկ առնական էին, կանայք՝ կանացի: Երեխաներն օգնում էին տնտեսության մեջ, խաղում և ուրախանում էին, մագլցում էին ծառերը, հատապտուղ

էին հավաքում, լող տալիս լեռնային գետակում: Մեծերը նրանց սովորեցրել էին թռչունների, կենդանիների ու բույսերի լեզուն, ու սրանցից երեխաները շատ բան էին իմանում: Բնության գրեթե բոլոր օրենքները նրանց հայտնի էին:

Մեծերն ու փոքրերը Բնության հետ ներդաշնակ էին ապրում:

Երեկոները բոլորը հավաքվում էին խարույկի շուրջը, ժպիտներ էին ուղղում աստղերին. ամեն մեկն ընտրում էր իր աստղն ու զրուղում հետը: Աստղերից նրանք իմանում էին Տիեզերքի օրենքների, ուրիշ աշխարհների կյանքի մասին:
Այդպես ապրում էին անհիշելի ժամանակներից:

Մի անգամ մի մարդ հայտնվեց գյուղում ու ասաց.
- Ես ուսուցիչ եմ:

Մարդիկ ուրախացան եկվորի հայտնվելով: Նրան վստահեցին իրենց երեխաներին՝ հուսով, որ ուսուցիչը կսովորեցնի նրանց ավելի կարևոր բաներ, քան տալիս են Բնությունն ու Տիեզերքը:

Մենակ մի բան չէին հասկանում մարդիկ. ինչո՞ւ ուսուցիչը չի ժպտում: Ինչպե՞ս կարող է պատահել, որ նրա դեմքն անժպիտ լինի:

Ուսուցիչն սկսեց երեխաների ուսուցումը:

Ժամանակն անցնում էր, և բոլորը նկատում էին, որ երեխաներն ակնհայտորեն փոխվում են, ավելի շուտ՝ կարծես նրանց փոխած լինեին: Նրանք դառնում էին նյարդային: Հետո չարությունը հայտնվեց, երեխաներն ավելի ու ավելի հաճախ էին վիճում իրար հետ, միմյանց իրերն էին վերցնում: Նրանք սովորել էին քմծիծաղ տալ, ծուռ ու կեղծ ժպտալ: Նրանց դեմքից չքացել էր նախկին՝ գյուղի բոլոր բնակիչների համար սովորական ժպիտը:

Մարդիկ չգիտեին՝ դա լավ է, թե վատ, քանի որ «վատ» բառն իսկ չունեին: Նրանք դյուրահավատ էին և համարում էին, որ այդ ամենը հենց նոր գիտելիք ու կարողությունն է, որ կա, որ ուսուցիչը դրսի աշխարհից բերել էր իրենց երեխաների համար:

Մի քանի տարի անցավ: Երեխաները մեծացան, և խուլ գյուղում կյանքը փոխվեց. մարդիկ, դուրս քշելով թույլերին, հողեր էին գրավում, ցանկապատում ու կոչում դրանք իրենց սեփականությունը: Նրանք իրար նկատմամբ անվստահություն ունեին: Մոռացան թռչունների, կենդանիների ու բույսերի լեզուն: Ամեն մեկը կորցրեց երկնքում իր աստղը:

Փոխարենը տանը հեռուստացույցներ, համակարգիչներ, բջջային հեռախոսներ հայտնվեցին, մեքենաների համար ավտոտնակներ բուսեցին:

Մարդիկ կորցրեցին իրենց պայծառ ժպիտը, բայց յուրացրին կոպիտ հռհռոց: Նայում էր այս ամենին ուսուցիչը, որ այդպես էլ ժպտալ չսովորեց, ու հպարտանում.

խուլ լեռնային մի գյուղում նա մարդկանց հաղորդակից էր արել ժամանակակից քաղաքակրթությանը….

5. Ամբողջ Տիեզերքը, Երկրի վրա ամբողջ Կյանքը միայն կենարար Ժպիտ է և Ուրախություն:

Ժպտում է Տիեզերքը Հավերժությամբ և Անսահմանությամբ:
Ժպտում է Երկինքը Աստղերով և Ծիածաններով:
Ժպտում է Արևը Շողերով և Լույսով:
Ժպտում է Երկիրը Մեծ Կյանքով:
Ժպտում է Կյանքը Վերելքով և Հաստատումով:
Ժպտում է Քրիստոս Կոչով և Օրհնությամբ:
Ժպտում է Դաշտը Ծաղիկներով և Անուշահոտությամբ:
Ժպտում է Մարդը Հավատքով և Արարումով:
Ժպտում է Երեխան Ներկային և Ապագային:

Ով ժպտում է, ապրում է:
Ով չի ժպտում, թոշնում է:

Ժպիտը կեցության որակի լավացման նշան է:
Պե՞տք է որ ժպտա Դպրոցը՝ Կյանքի պահապանը:
Դպրոցի ժպիտը Ուսուցիչն է:
Ուսուցչի ժպիտը իր Սիրտն է:

6. Երեխան ժպտում է դեռ չծնված՝ գտնվելով մոր արգանդում:
Իսկ երբ ծնվում է, ժամանակ պահեք. ճիշտ նշանակված ժամին նա կժպտա, և դա կլինի նրա Առաջին Ժպիտը, որը մենք կարող ենք տեսնել, եթե նրանից աչք չհեռացնենք:

Այն հայտնվում է նրա բերանի անկյունում: Նա կարող է այդ ժամանակ քնած լինել, կարող է նայել տարածության խորքը (տեսնո՞ւմ է ինչ-որ մեկին), կարևոր չէ, բայց նա անպայման կժպտա ճիշտ նշանակված ժամին, ո՛չ շուտ, ո՛չ ուշ: Բոլոր նորածինները գիտեն ժպտալու այդ ժամանակը:
Գուցե ժպիտն ուղարկում են աստղերի՞ն:
Այդ ժպիտը օրհնյալ և Աստվածային է, մարդկային բոլոր ժպիտներից ամենահիասքանչը:
Եվ շողում է նորածնի դեմքին ընդամենը մի քանի ակնթարթ: Հետո նա ետ է վերցնում Առաջին Ժպիտը, որպես աղբյուր մնացյալ բոլոր ժպիտների, որոնք շողում են նրա դեմքին հետագայում, կյանքի երկար տարիների ընթացքում:

Ո՞վ է Ժպիտի Մայրը: Եվ ո՞ւմ համար էր նախատեսված Առաջին Ժպիտը:

Կասեն՝էլ ո՞վ է Մայրը Ժպիտի, իհարկե Բնությունն է:
Բայց ոչ: Բնությունը միայն նպաստում է ժպիտի արտահայտմանը, նա միայն ուղեկիցն է ժպիտի: Իսկ ծնում է այն երեխայի հոգին, հոգին է ժպտում:

Բայց ո՞ւմ է ժպտում երեխան. ինքն իրեն հո չի՞ ժպտում:
Արևն էլ ինքն իր համար չի շողում, այլ ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի համար:
Ծաղիկներն էլ իրենք իրենց համար չեն աճում, այլ ուրիշների:
Անձրևն էլ ինքն իր համար չի հեղվում, այլ ուրիշների:

Երկրի վրա և Երկնքում այն ամենը, ինչ գոյություն ունի ուրիշի համար, Ժպիտ է, Ժպիտի դրսևորում:

Ժպիտը գոյություն ունի միայն ուրիշների համար: Եվ եթե մարդ ասի, որ կարող է ժպտալ ինքն իրեն, կպատասխանեմ՝ չի կարող, քանի որ հենց այդ ժամանակ նա իրեն ժպտում է որպես ուրիշի:
Բայց թե ում է ուղարկում նորածինն իր Առաջին Ժպիտը, գաղտնիք է: Մենք միայն կարող ենք գուշակություններ անել:

Մենք միայն կարող ենք գլխի ընկնել՝ ում. իր երանելի Աստվածային առաջին Ժպիտով նա ժպտում է նրան, ով իրեն ուղարկել է:
Հոգին բարեհաջող վայրէջքի նշան է ուղարկում իր Երկնային Հովանավորին:
Սակայն այդ նույն Առաջին Ժպիտը կարող է լինել նաև մեզ ուղղված՝ մարդկանց, ովքեր ընդունել են առաքվածին: Ճիշտ այնպես, ինչպես անսպասելի բարի լուրով մեր տուն եկած ավետաբերն է ժպտում:

7. Մեր ենթադրությունները չեն ցրում մանկան Առաջին Ժպիտի գաղտնիքը, այն հանելուկ է մնում: Եվ քանի դեռ այն հանելուկ է, քանի դեռ գիտությունն ի զորու չէ բացահայտելու, առիթից օգտվեմ և առասպել հորինեմ Ժպիտի ծագման մասին:

Ահա իմ առասպելը:
Դա եղել է վաղուց, շա~տ, շա~տ վաղուց, երբ մարդիկ դեռ ժպտալ չէին կարողանում…
Այո, այդպիսի ժամանակ եղել է:
Ապրում էին նրանք տխուր ու դժվար: Աշխարհը նրանց համար սև ու գորշ էր: Արևի փայլն ու վեհությունը չէին նկատում, աստղային երկնքով չէին հիանում, չգիտեին սիրո երջանկությունը:

Այդ անհիշելի ժամանակներում Երկնքի մի բարի հրեշտակ որոշեց իջնել Երկիր, այսինքն՝ մարմնավորվել, այսինքն՝ ծնվել և փորձել երկրային կյանքը:
«Բայց ինչո՞վ գնամ մարդկանց մոտ»,- մտածեց նա:
Նա չէր ցանկանում մարդկանց մոտ առանց նվերի գալ:
Այդ ժամանակ նա օգնության համար դիմեց Հորը:
- Մարդկանց սա նվիրիր,- ասաց նրան Հայրը և մեկնեց մի փոքրիկ կայծ, որը փայլփլում էր ծիածանի բոլոր գույներով:
- Սա ի՞նչ է,- զարմացավ բարի հրեշտակը:
- Սա Ժպիտ է,- պատասխանեց Հայրը:- Այն դիր քո սրտում և մարդկանց նվեր կտանես:
- Եվ նրանց սա ի՞նչ կտա,- հարցրեց բարի հրեշտակը:

- Դա նրանց կյանքի հատուկ էներգիա կտա: Եթե մարդիկ տիրապետեն նրան, ապա կգտնեն այն ուղին, որով հաստատվում են հոգու նվաճումները:
Բարի հրեշտակը զարմանալի կայծը դրեց իր սրտի մեջ:
- Մարդիկ կհասկանան, որ ծնված են իրար համար, իրենց մեջ կբացահայտեն սերը, կտեսնեն գեղեցկությունը: Միայն թե նրանք պիտի զգույշ վարվեն սիրո էներգիայի հետ, քանի որ …

Եվ հենց այդ ակնթարթին բարի հրեշտակը Երկնքից իջավ Երկիր, այսինքն՝ մարմին առավ, այսինքն՝ ծնվեց, և չլսեց Հոր վերջին բառերը. . .

Նորածինը լաց եղավ: Բայց ոչ այն պատճառով, որ վախեցավ մութ քարանձավից, տարակուսանքով իրեն նայող մարդկանց մռայլ և հազիվ նշմարվող դեմքերից: Նա լաց էր լինում սրտնեղությունից, որ մինչև վերջ չհասցրեց լսել՝ ինչու մարդիկ պետք է զգույշ վարվեն Ժպիտի հետ: Նա չգիտեր, թե ինչպես վարվեր՝ մարդկանց նվիրեր նրանց համար բերված Ժպիտը, թե դա թաքցներ նրանցից:

Եվ որոշեց. սրտից հանեց կայծի շողիկը և տեղադրեց իր բերանի անկյունում: «Ահա ձեզ նվեր, մարդիկ, վերցրեք»,- մտովի հայտնեց նրանց:

Ակնթարթորեն քարանձավը լուսավորեց մոգական լույսը: Դա նրա Առաջին Ժպիտն էր, և մռայլ մարդիկ առաջին անգամ էին Ժպիտ տեսնում: Նրանք վախեցան և փակեցին աչքերը: Միայն մռայլ մայրը չէր կարողանում աչքը կտրել անհասկանալի երևույթից. նրա սիրտը թրթռաց, իսկ դեմքին արտահայտվեց այդ հմայքը:
Նա իրեն լավ զգաց:

Մարդիկ բացեցին աչքերը, և նրանց հայացքը իր վրա գամեց ժպտացող կինը:
Այդ ժամանակ նորածինը բոլորին ժպտաց նորից, նորից ու նորից:
Մարդիկ մեկ փակում էին աչքերը, չդիմանալով ուժեղ փայլին, մեկ՝ բացում: Բայց վերջապես վարժվեցին և փորձեցին իրենք էլ ընդօրինակել նորածնին:
Բոլորը լավ զգացին իրենց սրտի անսովոր զգացմունքից: Ժպիտը նրանց դեմքից ջնջեց մռայլությունը: Աչքերը սիրուց փայլեցին, և նրանց համար այդ պահից ամբողջ աշխարհը դարձավ բազմագույն. ծաղիկները, Արևը, աստղերը նրանց մեջ գեղեցկության, զարմանքի և հիացմունքի զգացողություն արթնացրին:
Բարի հրեշտակը, որ ապրում էր երկրային մանկիկի մարմնում, մտովի մարդկանց փոխանցեց իր անսովոր նվերի անունը, բայց նրանց թվաց, որ «ժպիտ» բառը իրենք հորինեցին:

Նորածինը երջանիկ էր, որ մարդկանց այդպիսի հրաշագործ նվեր էր բերել: Սակայն երբեմն նա տխրում ու լաց լինում: Մորը թվում էր, որ նա սոված է, և շտապում էր կուրծք տալ: Բայց նա լաց էր լինում, քանի որ չէր հասցրել մինչև վերջ լսել Հոր խոսքը և մարդկանց փոխանցել զգուշացումը, թե ինչ զգուշություն պետք է դրսևորեն Ժպիտի էներգիայի հետ:
Այսպես Ժպիտը եկավ մարդկանց մոտ:

Այն փոխանցվել է և մեզ՝ ներկա դարաշրջանի մարդկանց:

Եվ մենք այդ էներգիան կփոխանցենք հետագա սերունդներին:
Բայց ունե՞նք այն գիտելիքը, թե ինչպես պետք է վարվենք Ժպիտի էներգիայի նկատմամբ: Ժպիտը զորություն է կրում: Բայց ինչպե՞ս օգտագործենք այդ էներգիան միայն բարիքի համար, այլ ոչ չարիքի:
Հնարավոր է, որ մենք արդեն խախտում ենք այդ էներգիայի ինչ-որ կարևոր օրենք: Ասենք՝ կեղծ ենք ժպտում, անտարբեր ենք ժպտում, ծաղրանքով ենք ժպտում, չար ենք ժպտում:
Նշանակում է՝ վնասում ենք ինքներս մեզ և ուրիշներին:
Մեզ հարկավոր է անհապաղ լուծել այդ հանելուկը, կամ էլ պետք է սպասենք այնքան, մինչև Երկնքից կիջնի մեր բարի հրեշտակը՝ բերելով Ժպիտի էներգիայի մասին ամբողջ տեղեկությունը:
Միայն թե ուշ չլինի:

8. «Ժպտացեք սեփական ԵՍ-ին: Ժպտացեք յուրաքանչյուրին: Ժպտացեք երեխաներին: Ժպտացեք ձեզ Առաքողին»,- կասեմ ես:
Սակայն մեկը կհակաճառի ինձ. «Իսկ եթե չեմ ցանկանում ժպտալ, տրամադրություն չունեմ, միևնույն է, պետք է ժպտա՞մ»:
Մյուսը կավելացնի. «Հիմարություն է մշտապես ժպտացող մռութ ունենալը»:
Երրորդը ինձ կընդհատի. «Ասենք՝ մարդը բնավորություն ունի, որի մեջ ժպիտը չի ներառվում»:
Կգտնվի նաև չորրորդը, ով պայման կդնի. «Կյանքը լավը լինի՝ կժպտամ»:
Այսպես կասեն նրանք, ովքեր չգիտեն, որ ժպիտը հոգու պարգև է. նա բխում է սրտից, և բոլոր ժպիտները, որոնք սրտից չեն, կեղծավորությունից են: Նրանք չգիտեն նաև, որ այն ժպիտը, որը սրտից է, վերափոխում է կյանքը, այն գեղեցիկ դարձնում: Ոչ թե կյանքն է սնում ժպիտը, այլ ժպիտն է սնում կյանքը:

Սակայն թող չժպտա նա, ով չի ցանկանում ժպտալ, ով նեղացած է կյանքից, ում բնավորությունն է այդպիսին՝ անժպիտ, ում համար ժպիտը դեմքի անբնական ծամածռություն է:
Միայն պետք է խնդրել նրանց՝ մի ընտրեք մանկավարժի մասնագիտություն, երեխաները չեն սիրում ուսուցիչներին և դաստիարակներին, ովքեր չեն կարողանում և չեն ցանկանում իրենց անկեղծ ժպտալ: Ժպիտից զրկված մանկավարժը միայն կարող է վնասել իր սաներին:

9. Վեց տիեզերագնացներ թռչում են «Սալյուտ-7» տիեզերանավով: Եվ հանկարծ տեսնում են՝ իրենց դիմաց անհայտ ծագման մեծ, նարնջագույն ամպ առաջացավ: Մինչ տիեզերագնացները գուշակում էին, թե ինչ կարող է լինել, իսկ երկրի ծառայությունները վերլուծում էին կայանից ստացված հաղորդագրությունները, տիեզերանավը մտավ ամպի մեջ: Մի պահ թվաց, որ ամպը ներթափանցել է տիեզերանավ, իսկ նարնջագույն լուսարձակումները շրջապատել էին յուրաքանչյուր տիեզերագնացի՝ կուրացնելով և զրկելով կատարվողը տեսնելու հնարավորությունից: Տեսողությունն անմիջապես վերականգնվեց, և տիեզերագնացները նետվեցին դեպի իլյումինատորները: Եվ ի՞նչ տեսան նրանք: Պարզորոշ տեսան յոթ հսկա կերպարանքներ, որոնք թռչում էին իրենց ետևից: Եվ

ոչ մեկի մտքով չանցավ կասկածել. նրանց ուղեկցում էին Երկնային Հրեշտակները՝ հսկա թևերով և գլուխների շուրջը կուրացնող լուսապսակներով: Սակայն տիեզերագնացներին զարմացրեց լրիվ այլ բան՝ նրանց դեմքի արտահայտությունը. նրանք նայում էին մարդկանց և ժպտում: «Նրանք ժպտում էին: Դա ողջույնի ժպիտ չէր, այլ հիացմունքի և ուրախության ժպիտ: Մենք այդպես չենք ժպտում»,- պատմում էին կախարդված տիեզերագնացները: Հետո հրեշտակներն անհետացան, իսկ տիեզերագնացների հոգում մնաց անբացատրելի կորստի զգացում: Դա պատահել է 1985թ. դեկտեմբերին:
Գիտեի՞ք այդ մասին:
Ես այդ փաստի մասին բոլորովին վերջերս եմ իմացել:

10. Ի՞նչ է Ժպիտը: Ինչպե՞ս է նա վերա-Ձև-ում ձեր ու իմ, մեր անձնական կամ հասարակական կյանքը:
Ահա, թե ինչ եմ մտածում այս հարցերի մասին:
Ժպիտը ոգեղեն հատուկ ուժ է, որն անցնում է սրտով և արտաքնապես հայտնվում է որպես դեմքի՝ ներքին լույս և ջերմություն ճառագող արտահայտություն: Ժպիտների միջոցով բացահայտվում, փոխանցվում, ուրիշներին են ուղարկվում մեր հարաբերությունները, զգացմունքները, մտքերը: Եվ քանի որ իսկական Ժպիտը գալիս է միայն բարի սրտից, ապա այն, ինչ նրանով արտահայտվում է, ծառայում է աջակցելու, խրախուսելու, ոգեշնչելու, հանգստացնելու նրանց, ում այն ուղղված է: Ժպիտը, մտքի նման, ոգու ծնունդ է. նրա որակը, ինչպես և մտքի որակը, բխում է սրտից: Բարի զգացումներով լեցուն Ժպիտը, մարդկանց ոգեշնչում է բարի գործերի:

Ի՞նչ կարող է արարել Ժպիտի էներգիան:

Ահա, թե ինչի է նա ընդունակ.
- բարձրացնում է և՛ նրա տրամադրությունը, ով ժպտում է, և՛ նրանը, ում ժպտում են.
- ամրացնում է բարու ձգտումը և՛ նրա մեջ, ով ժպտում է, և՛նրա, ում ժպտում են.
- այլ կերպ ասած՝ ազնվացնում է և՛ նրան, ով ժպտում է, և՛ նրան, ում ժպտում են.
- ուժեղացնում է մարդկանց վստահությունը միմյանց նկատմամբ, նպաստում է հոգեկան միասնության առաջացմանն ու ամրապնդմանը.
- նպաստում է մարդկանց մեջ հավատի, հույսի, սիրո առաջացմանն ու ամրապնդմանը.
- մարդկանց կոչում և տանում է համագործակցության ճանապարհով, ազնվացնում է նրանց հանրությունը.
- ծառայում է որպես բուժական ճառագում.
- ներդաշնակում է մարդկանց բնավորությունը, նրանց դարձնում ավելի համբերատար ու զիջող.
- հեշտացնում և կարճացնում է մարդկանց մերձեցման ճանապարհը, նպաստում փոխըմբռմանը.
- ծառայում է ոգու բարիքների կուտակմանը.
- հանգցնում է չարությունը, թշնամությունը, անբարյացակամությունը, ատելությունը.
- մարդկանց կյանքը դարձնում է գեղեցիկ, զվարթ:

Այսպես է ժպիտը զորություն բերում:

11. Մի անգամ Աստված ասաց. «Այնպես եմ անելու, որ աշխարհի բոլոր մարդիկ միաժամանակ ժպտան: Միգուցե այդ ժամանակ նրանք հասկանան, թե իրենց կյանքի ինչ էներգիա եմ պարգևել»:

Եվ Նա այդպես արեց. Երկրի բոլոր մարդիկ, բոլոր-բոլորը, առանց բացառության, հանկարծ նայեցին երկինք և, չիմանալով՝ ինչու, սրտաբուխ ժպիտներ հղեցին դեպի Անհունը:

Նույն պահին ամբողջ մոլորակի վրա հնչեց Ոլորտների Երաժշտությունը, Երկինքը բացվեց, և յուրաքանչյուրն իր աչքով տեսավ Երկնային Արքայությունը:
Հետևեց մարդկանց զարմանքը, հիացմունքը և վախը:
«Հաաա~»,- ալիքվեց տարածության մեջ:

Եվ միանգամից ամեն ինչ անցավ. Ոլորտների Երաժշտությունը դադարեց, և Երկինքը փակվեց:
«Սա ի՞նչ էր»,- տարակուսում էին մարդիկ, բայց պատասխանը չէին գտնում:

Ոչ ոք այդ հրաշքը, որի ականատեսն էր դարձել, չէր կապում ժպիտի հետ, որ հղել էր դեպի Անհունը: Նրանք պատասխանը փնտրում էին իրենցից հեռու-հեռու, բայց ոչ իրենց մեջ, իրենց անկեղծ ժպիտի:

Միայն մանկիկը, ով մյուսների հետ նույնպես ժպտացել էր և տեսել հրաշքը, հավաքեց իր հետագա բոլոր շնորհները և մտովի կանչեց. «Իմ ժպիտը զորություն ունի, նա բացեց Երկինքը»: Մանկիկը թոթովեց, բայց մայրը ոչ մի ուշադրություն չդարձրեց նրան:

Իսկ ի՞նչ կլիներ, եթե նույնիսկ նա լսեր, թե ինչ է բարբառում մանկիկը:
Ի միջայլոց, բոլորը գիտեն, որ մանկան շուրթերով ճշմարտությունն է խոսում, բայց մեծերը չեն հավատում մանկանց, քանի որ ճշմարտությունը նրանց հասկանալի չէ և պետք չէ:

Գոնե մանուկներն արագ մեծանային և իրենց ճշմարտությունները չմոռանային:

12. Ժպիտը ոգեղեն ընծա է: Նա ոգու շռայլության և անձնազոհության հետ է կապված: Գուցե և լավ չես զգում, բայց ժպտա ուրիշին, որպեսզի նա լավ զգա: Սա անձնազոհ ժպիտ է:

Մորս եմ հիշում: Ես իմ ընտանիքով առանձին էի ապրում, անբողջովին կլանված էի իմ սիրած աշխատանքով և միայն ժամանակ առ ժամանակ էի այցելում մորս: Նա ինձ դիմավորում էր առույգ և ուրախ, հարց ու փորձ էր անում գործերիցս, համեղ կերակրում: Իսկ երբ պատրաստվում էի գնալ, դռների մեջ կանգնեցնում ու հարցնում էր. «Էլ ե՞րբ կգաս»: Հետո նա հիվանդանոց պառկեց. դա ինձ համար շատ անսպասելի էր: Նա գիտեր, որ իրեն մի քանի օր էր մնացել ապրելու: Նստեցի նրա

մահճակալին: Նա ձեռքս բռնեց իր նիհարած ձեռքերով մեջ և քնքշորեն ժպտաց: Եվ ես տեսա սրտի ժպիտը՝ սիրով լեցուն: Հետո նա հեռացավ կյանքից, և միայն այդ ժամանակ իմացա մեր մերձավորներից, որ նա հատիկ առ հատիկ հավաքում էր մեջ մնացած ուժերը, երբ այցելում էի իրեն, վեր էր կենում անկողնուց, դիմավորում և հյուրասիրում էր ինձ, ժպտում ու փորձում առույգ երևալ: Ամեն ինչ անում էր, որ գլխի չընկնեմ իր հիվանդության մասին, ինչը, իր կարծիքով, կխանգարեր ինձ, որ փորձեր անեմ և պաշտպանեմ մարդասիրական մանկավարժության գաղափարները: Մորս անձնազոհ ժպիտը նեցուկ դարձավ իմ ներքին հոգևոր-բարոյական աշխարհին:

Այդ ժպիտն ինձ զորություն է տալիս և բազմապատկում իմ ոգու ընծաները:

13. Ժպիտը ոգու ընծան է և այդ պատճառով էլ անկեղծ, սրտաբուխ, բարի, հանդարտ, ջերմ ու պայծառ չի կարող չլինել: Նա սրտից է բխում և ներծծված է սիրով: Սրանք բոլորը Ժպիտի որակներ են:

Ժպիտը նշան է, որի իջոցով արտահայտվում են հարաբերությունների տարբեր սպեկտորները, և մարդուն փոխանցվում է այն սպեկտորի հզորությունը, որի պակասը նա տվյալ պահին ամենաշատն է զգում:

Ահա, թե ինչպիսին կարող են լինել Ժպիտի սպեկտորները.
- ընկերական ժպիտ,
- սիրալիր ժպիտ,
- համուրախության ժպիտ,
- խրախուսման ժպիտ,
- գորովալից ժպիտ,
- համաձայնության ժպիտ,
- միավորման ժպիտ,
- ըմբռնումի ժպիտ,
- հիացումի ժպիտ,
- հանգստացնող ժպիտ,
- ափսոսանքի ժպիտ,
- ցավակցության ժպիտ,
- կարեկցանքի ժպիտ:

14. Կա երևացող և չերևացող կամ ներքին ժպիտ:

Չերևացող ժպիտը կարելի է համեմատել ներքին խոսքի հետ: Ներքին խոսքը մարդու մեջ ստեղծում է խոսքային իրավիճակ, որտեղից կարող են մտքեր առանձնանալ, ձևակերպվել, իսկ հետո դրանք կարող են արտաբերվել (արտասանվել) կամ գրի առնվել, այսինքն՝ ներքին խոսքը վեր է ածվում արտաքինի:

Բայց այդ մտքերը կարող են նաև չարտասանված, ծածուկ մնալ:

Կարծում եմ, որ խոսքային իրավիճակի նման, որի միջուկը ներքին խոսքն է, մարդու

մեջ գոյություն ունի ժպիտի իրավիճակ, որի հիմքը ներքին Ժպիտն է: Այն ընդգրկում է մարդու ողջ էությունը, նրա ոգեղեն-բարոյական աշխարհը: Ներքին Ժպիտը կարող է արտահայտվել սպեկտորի այս կամ այն տեսքով, բայց կարող է և չբացահայտված մնալ, սակայն այդ դեպքում էլ ղեկավարում է մարդու գործողությունները, զարդարում նրա գործերը և մարդկանց հետ հարաբերությունները համապատասխան սպետորներով:

Մարդու մասին, ով լեցուն է Ժպիտով, այսինքն՝ մշտական ժպիտի վիճակում է (ինչպես որ մշտական ներքին խոսքի վիճակում է՝ գիտակցված կամ չգիտակցված), կարելի է ասել, որ նա հենց Ժպիտն է, նա ապրում է ինչպես Ժպիտը: Նրա կյանքը ժպիտներ է առկայծում՝ արտահայտված կամ չարտահայտված, մարդը բարերար էներգիա է ճառագում, որից կարող են շատերն օգտվել՝ ում նա ժպտում է, կամ ով նրա ճառագայթման դաշտում կլինի: Մեզ դուր է գալիս այդպիսի մարդու կողքին լինելը:

Չբացահայտված ժպիտը այն է, որը չի անդրադարձել մարդու դեմքին, բայց նրա ոգեղեն աշխարհում ձևավորվել է որպես բարերարության կերպար, սիրո կերպար, որպես նպատակասլացության կերպար: Չբացահայտված ժպիտը, ինչպես և արտահայտվածը, որոշակի է, այսինքն՝ ուղղված է ինչ-որ մեկին կամ ինչ-որ բանի: Մարդը հոգում ժպտում է նաև նրան, ով գուցե կողքին չէ: Ժպիտը հղվում է, և ինչպես ուղարկված միտքը, տեղ է հասնում:

Արտահայտված ժպիտն այն է, որ արտացոլվում է մարդու դեմքին. շուրթերը մի քիչ բացվում են, դեմքը, աչքերը լույս ու փայլ են արձակում:

Եթե ժպիտի գունային հաջորդափունջը (գամման) փնտրենք, ապա ամենայն հավանականությամբ անսովոր մի բան, գույների Աստվածային զուգադրություն կհայտնաբերենք, որը փոխվում է յուրաքանչյուր որոշակի դեպքում: Եթե ժպիտը ծաղկի հետ համեմատենք, ապա պետք է պատկերացնել բազմաթիվ դաշտային նուրբ ծաղիկներ, որոնք ձեզ առանց պարտադրանքի ուրախություն, հանգստություն են պարգևում, նպաստում հանգստանալուն, բուժում են: Ժպիը հոգու ծիածանն է: Ժպիտը, ինչպես և միտքը, չի կրկնվում, այն միանգամյա է, միակն է ոչ միայն զգացմունքների ներքին զուգադրությամբ, այլ նաև իր արտաքին արտահայտմամբ: Ժպիտի ներքին էությունն է ստեղծում նրա արտաքին տեսքը:

Ժպիտը, ինչպես և միտքը, անձայն է: Նա ծիծաղ չէ, որը հնչում է, շչում, ցնցում է տարածությունը, որը կարելի լսել հեռավորության վրա: Ցանկանում եմ միանգամից ավելացնել ժպիտի և ծիծաղի մի կարևոր տարբերություն. մարդը ծիծաղում է իր հաճույքի համար, ինչպես խմում է, ուտում, բայց ժպտում է ուրիշի համար: Ծիծաղն իր մեջ զոհողություն չունի:

Ժպիտ կարելի է միայն զգալ և նկատել: Կարելի է նկատել նրա ուրվագիծը մարդու դեմքին և փայլը: Ավելի ճիշտ կլինի ասել, որ նկատում ենք ոչ թե ժպիտը, այլ նրա նյութական արտահայտությունը: Բուն ժպիտը կարող ենք ընկալել զգացողությամբ:

Ժպիտը զգացմունքների հատուկ զուգորդությամբ փունջ է, այդ պատճառով էլ զգացմունքները նրան կարող են «տեսնել», ընկալել: Իսկ արտաքին ժպիտը մարդու ներսից ճառագայթող էներգիան նշող ձևն է:

Ժպիտի հոգեվիճակով մարդը երկրային արեգակ է: Այդպիսի մարդիկ մեզ ջերմացնում են, պաշտպանում, ոգևորում: Նրանք մեր կողմից ընկալվում են որպես հմայիչ, բարի, զգայուն և հարազատ: Մեզանից յուրաքանչյուրը նույնպես արեգակ է, եթե սրտում ուրիշների համար ժպիտ է ջերմանում:

15. Ցանկանում եմ կրկնել՝ համեմատելով ժպիտը և ծիծաղը:

Չնայած ծիծաղը իր բնույթով ուրախության արդյունք է, և, չնայած որ հաճախ ժպիտը և ծիծաղը նույն մակարդակի են համարում, բայց և այնպես դրանց յուրաքանչյուրի բնույթը խիստ տարբերվում է մյուսից: Եթե դատենք արտաքին արտահայտման ձևով, ապա, կարող է թվալ, որ ժպիտը ծիծաղի նախերգանքն է. մարդը ժպտում է և անմիջապես սկսում է ծիծաղել: Բայց այդ ժպիտը, որը կարող է նախորդել ծիծաղին, միայն արտաքնապես է նման ժպիտի: Իր բնույթով այն ծիծաղի անբաժանելի մասն է և ծառայում է նույն նպատակին, ինչին որ ծիծաղը:
Իսկական Ժպիտը ոգու պարգևներ է տալիս ուրիշներին, այն ոգեղեն է:

Հենց այս նվիրատվությունն է բացակայում ծիծաղի մեջ: Մարդիկ ծիծաղում են, բայց ամեն անգամ և յուրաքանչյուրը ծիծաղում է իր համար, իր զգացմունքային հաճույքի համար: Իր ծիծաղով, նույնիսկ վարակիչ, մարդն ուրիշին բարու, ուրախության, քաջալերանքի էներգիա ուղարկելու մտադրություն չի ունենում: Ծիծաղով մարդը միայն իրեն է լիցքավորում:

Իհարկե, պետք է լինի ծիծաղի աղբյուր՝ մարդ, որը ծիծաղեցնում է մյուսներին իր սրամտությամբ, հումորով, ծիծաղելի պատմություններ, այդ թվում՝ անեկդոտներ պատմելու կարողությամբ: Բայց նա, ով ծիծաղեցնում է, նույնպես լցված չէ բարձրագույն ձգտումներով: Կարելի է ծիծաղել տարբեր պատճառներով, բայց ուրիշի համար, հանուն ուրիշ մարդու ոչ ոք չի ծիծաղում:

Ծիծաղը լավ տրամադրություն է առաջացնում, երբեմն պահպանում է մեր առողջությունը և բուժում է (անվանենք ծիծաղաբուժություն). Բայց իմ ծիծաղը ուրիշներին չի ուղղորդում իմ կարեկցանքի էներգիան: Եվ եթե նույնիսկ ծիծաղն ուղղված է ուրիշին, ապա դա ավելի շուտ չար էներգիա է, չարախնդության էներգիա՝ մեկին ձեռք առնելու, ծաղրելու (այսինքն՝ մարդուն ստորացնելու):

16. Ժպիտն իր մեջ Աստվածային Ակունք ունի:
Աստվածայինը ամեն ինչ պետք է ծառայի Աստվածայինին՝ ոգեղենին, վեհին, բարօրությանը, բարուն: Այդպիսինն է Ժպիտի դերը: Ասում են. «Աստվածային Ժպիտ», «Հրեշտակային Ժպիտ»:
Բայց մարդկանց ստոր զգացմունքները և նկրտումները ծնել են Ժպիտի կեղծումը, հակապատկերը: Իսկական Ժպիտը միայն բարիք է փոխանցում, իսկ ուրիշին չարիք փոխանցել չի կարող և չի անի: Իսկ կեղծ ժպիտները փոխանցում են,

նպատակաուղղված ուղարկում են հենց չար, բացասական էներգիա: Ահա այդ հակաժպիտները.

- շինծու ժպիտ,
- կեղծ ժպիտ,
- չարախինդ ժպիտ,
- անտարբեր ժպիտ,
- ներողամիտ ժպիտ,
- թունոտ ժպիտ,
- դավաճանական ժպիտ,
- խորամանկ ժպիտ,
- հեգնական ժպիտ,
- ծաղրական ժպիտ,
- բաղձանքի ժպիտ,
- ստոր ժպիտ,
- ինքնագոհ ժպիտ,
- դիվային ժպիտ:

17. Մի անգամ բորոտը ցախ հավաքեց և հենց հրապարակում խարույկ արեց:
- Ի՞նչ ես անում,- հարցրեցին հավաքվածները՝ նրանից հեռու կանգնած:
- Իմ բորն եմ վառում,- պատասխանեց նա:

Գետնից վերցրեց փշոտ ճյուղը, կոտրեց մի փուշ և գցեց խարույկի մեջ:
- Մոխիր դարձիր, իմ չարության ժպիտ:
Հետո կոտրեց երկրորդ փուշը և նորից գցեց խարույկի մեջ:
- Մոխիր դարձիր, իմ ստորության ժպիտ:
Այդպես նա կոտրում էր փշերը, գցում խարույկի մեջ և ասում.
- Մոխիր դարձիր, իմ ատելության ժպիտ:
- Մոխիր դարձիր, իմ նախանձի ժպիտ:
- Մոխիր դարձիր իմ դավաճանության ժպիտ:
Այրեց նա իր լպիրշության, անտարբերության, չարախնդության, տենչանքի ժպիտները:

Բորոտի աչքերից արցունքի հեղեղ էր հոսում: Վերջապես, խարույկի մեջ գցելով վերջին փուշը, հայացքն ուղղեց Երկինք և հանդիսավորությամբ ու մեծ աղերսանքով արտասանեց.
- Աստված իմ, վերադարձրու իմ Սրտի Ժպիտը:
Եվ այս խոսքերով նետվեց խարույկի մեջ:
- Ա՛հ,- սարսափով բացականչեցին հավաքվածները:
Մի ակնթարթ հետո կրակի բոցկլտացող լեզուների վրա հայտնվեց սքանչելի երիտասարդ՝ իր ճառագայթող Սրտի Ժպիտով:

- Տեսեք, Աստված մաքրեց ինձ,- արտասանեց նա հանդիսավորությամբ,- Կրակը նաև ձեր մեղքերը կընդունի: Մաքրվեք, ով ցանկանում է: Ո՞վ է ուզում:

Ժպիտները, որ այրեց բորոտը, կարելի է խավարի ժպիտներ անվանել: Յուրաքանչյուր ոք, ով իր մեջ խավարի ժպիտները կհաղթահարի, արժանի է այնպիսի հարգանքի, ինչպես նա, ով մարդկանց ներկայանում է Հերոսության Ժպիտով:

18. Ժպիտը զորություն է փոխանցում:

Ժպիտի կրակն ամենակարող է: Նա կարող է մոխրացնել խավարի ժպիտները, մարդու մեջ կյանքը վերականգնել: Բայց մեր և ձեր ժպիտների կրակի զորությունը կախված է ոչ թե մեր ժպիտներից, այլ մեր բարի նպատակներից:

Ժպիտի կրակի զորություն են կրում՝

- Հերոսության Ժպիտը,
- Նվիրվածության Ժպիտը,
- Միավորման Ժպիտը,
- Համագործակցության Ժպիտը,
- Վճռականության Ժպիտը,
- Ինքազոհության Ժպիտը,
- Օգնության Ժպիտը,
- Ստեղծականության Ժպիտը,
- Փրկության Ժպիտը:

Այս Ժպիտները սքանչելի են, վսեմ, տոնական: Այս Ժպիտները ճառագող են: Նրանց մեջ Լույսի բարձրագույն էներգիան է: Լուսավոր Ժպիտը պահպանում է Երկիր մոլորակը: Մեր Լուսավոր Ժպիտն է կառուցում Տիեզերքը:

19. Ինչ-որ տեղ մի սքանչելի պատմություն եմ կարդացել, հեղինակին չեմ հիշում, ինչի համար հայցում եմ նրա ներողամտությունը:
Պատմությունը սա է:

Ընտանիքը լողափին հանգստյան օր էր անցկացնում: Երեխաները ծովում լողում էին, ավազից ամրոցներ կառուցում:
Մեկ էլ հեռվում մի փոքրիկ տատիկ երևաց: Նրա սպիտակ մազերը ծածանվում էին քամուց, հագուստը կեղտոտ էր ու ճղճղված: Նա ինչ-որ բան էր դնդնում ինքն իրեն՝ ավազից հավաքելով և պայուսակը լցնելով ինչ-որ առարկաներ:
Ծնողները կանչեցին երեխաներին և պատվիրեցին հեռու մնալ տարօրինակ տատիկից: Երբ անցնում էր կողքից և կռացավ ինչ-որ բան վերցնելու, նա ժպտաց ընտանիքին, բայց ոչ մեկը չպատասխանեց նրան: Շաբաթներ անց նրանք իմացան, որ այդ փոքրամարմին տատիկը ապակու կտորներն էր հավաքում լողափից, որոնք կարող էին կտրտել երեխաների ոտքերը:

20. Ժպիտը յուրահատուկ Իմաստություն է:
Այդ իմաստությանը տիրապետելը նշանակում է ոչ թե ուղղակի ապրել Երկրի վրա, այլ ապրել յուրահատուկ ձևով: Իր մեջ Ժպիտի իմաստությունը հայտնաբերած

մարդը կյանքում կգնա վերին ուղիներով, նեղ արահետներով, դեպի Նեղ Դարպասները:

Օրինակնե՞ր են հարկավոր:
Մայր Թերեզայի կյանքի օրինակը:
Նա Աստվածային Ժպիտի կյանք է ապրել և ինքն էլ դարձել մի Մեծ Ժպիտ, դրա իմաստության կերպարը: Նա ժպտում էր ոչ միայն նրանց, ում փրկում էր. իր սրտի և հոգու Մեծ Ժպիտով գրկում և լցնում էր ամբողջ Մոլորակը, ամբողջ մարդկությունը՝ իր անցյալ, ներկա և ապագա սերունդներով: Իր Ժպիտի լույսն ու զորությունը նա թողել է մեզնից յուրաքանչյուրին: Մենք պետք է միայն կարողանանք ընդունել Մայր Թերեզայի Ժպիտը:
Կա մարդկանց ժպիտ պարգևելու շնորհ: Բայց անհրաժեշտ է նաև ժպիտն ընդունելու շնորհ:
Մայր Թերեզայի Մեծ Ժպիտի պատկերը տրված է շատ սերունդների և երկար դարերով: Նրա Ժպիտը Արեգակի նման է՝ չի հանգչում:

Ո՞րն է Ժպիտի իմաստությունը:
Այդ իմաստությունը կարող ենք ճանաչել Մայր Թերեզայի Ժպիտի Իմաստության կենդանի օրինակով:
Ինպե՞ս ժպտանք մեր ժպիտի կարիքն ունեցող մարդկանց: Այնպես, ինչպես Մայր Թերեզան:
Ինչպե՞ս կժպտար նա սովյալին, ում պետք էր կերակրել: Ինչպես Հիսուս Քրիստոսին:
Ինչպե՞ս կժպտար ծարավին, ում պետք էր ջուր տալ: Ինչպես Հիսուս Քրիստոսին:
Ինչպե՞ս կժպտար անտուն մարդուն, ում պետք էր տեղավորել: Ինչպես Հիսուս Քրիստոսին:
Ինպե՞ս կժպտար նա միայնակին ու լքյալին: Ինչպես Հիսուս Քրիստոսին:

Իսկ ոչ ցանկալիի՞ն:
Բորոտի՞ն:
Հոգեկան հիվանդի՞ն:
Անցորդի՞ն:
Կալանավորի՞ն:
Կույրի՞ն:
Անհավատի՞ն:
Ինչպե՞ս կժպտար նա պոռնիկին, ում պետք էր փրկել և կյանքը դասավորել:
Իսկ քարացած սրտով մարդո՞ւն:
Ոսկուց կուրացածի՞ն:
Իսկ իշխանությամբ արբեցածի՞ն:
Ինչպե՞ս կժպտար նա հենց Հիսուս Քրիստոսին:
Մայր Թերեզան նրանցից յուրաքանչյուրին կժպտար այնպես, ինչպես Հիսուս Քրիստոսին:
Սա է Ժպիտի Յուրահատուկ Իմաստությունը:
Յուրաքանչյուր մարդու, կյանքի յուրաքանչյուր երևույթ Մայր Թերեզան ընդունում էր որպես Հիսուս Քրիստոս: Նա մարդկանց փրկում էր համաճարակից, աղետներից,

մարդկային արատներում խեղդվողներին փրկության ձեռք էր մեկնում՝ նրանց ժպտալով Հերոսության Ժպիտով, Նվիրվածության Ժպիտով, Կարեկցության Ժպիտով, Ինքնազոհության Ժպիտով, Հավատի, Հույսի, Սիրո Ժպիտով և, ընդհանրապես, իր՝ Հիսուս Քրիստոսի Ժպիտով:

Իսկ ինչպե՞ս կժպտար նա ինձ, դպրոցի սովորական ուսուցչիս:
Ինչպե՞ս կարող էր ժպտալ, եթե նա Հիսուս Քրիստոսի Ժպիտից բացի ուրիշը չուներ:
Ես ակնածանքով եմ ընդունում այդ Ժպիտը, և սիրտս լցվում է Արարչի էներգիայով:
Հպարտանում եմ, որ ուսուցիչ եմ. ընդունում եմ այդ ժպիտն ու շտապում երեխաների մոտ: Այսօր նրանք ամենաշատը իրենց ուսուցչի Ժպիտի կարիքն ունեն:
Եվ կժպտամ նրանց Հիսուս Քրիստոսի Ժպիտով:

21. Սպիատակահեր, ակնոցով ուսուցչուհին, ստուգողական տետրերի կապոցը թևատակին, ցրված, կանգնած էր երկու սոճիների արանքում և ուշադիր զննում էր գետնի յուրաքանչյուր թիզը:
Ամեն օր էր այդպես անում, սկսած այն օրվանից, երբ առաջին անգամ դպրոց գնաց, և ճանապարհին, որն անցնում էր այս երկու սոճիների անտառով, հանկարծ զգաց, որ ինչ-որ կարևոր բան կորցրել է: Այդպես էլ չհասկացավ, թե ինչ: Բայց սիրտը վկայում էր, որ առանց դրա դպրոցում իր համար դժվար է լինելու:
Ահա այս անգամ էլ դպրոցի ճանապարհին կանգ առավ և շարունակեց իր փնտրտուքը:

Ուսուցչուհու հետևից դպրոց գնացող աշակերտն էլ կանգ առավ: Նա առաջ էլ էր նկատել սոճիների արանքում ինչ-որ բան փնտրող իր ուսուցչուհուն:
Առաջ նա չէր համարձակվում մոտենալ, բայց այս անգամ սիրտ արեց:
- Ի՞նչ եք անում,- ամաչկոտ հարցրեց նա:
- Փնտրում եմ,- մռայլ պատասխանեց ուսուցչուհին՝ չնայելով նրա կողմը:
- Ի՞նչ եք փնտրում:
- Քո ի՞նչ գործն է,- զայրացավ ուսուցչուհին:- Դպրո՛ց գնա:
- Վաղո՞ւց եք կորցրել,- նորից վախեցած հարցրեց աշակերտը:
- Վաղուց, վաղուց, հենց որ ուսուցիչ դարձա: Իսկ հիմա գնա և ինձ մի՛ խանգարիր,- հրամայեց նա աշակերտին:
Բայց աշակերտը չէր գնում:
- Համոզվա՞ծ եք, որ հենց այստեղ եք կորցրել:
Ուսուցչուհին պոռթկումի եզրին էր:
- Այո, այո, այս անտառում. ուրիշ որտե՞ղ կարող էի կորցնել,- զայրացավ նա, կարծես աշակերտն էր մեղավոր իր դժբախտության համար:
- Կցանկանա՞ք օգնեմ,- զգուշորեն առաջարկեց աշակերտը:
- Ինչպե՞ս կարող ես օգնել, երբ ինքս էլ չգիտեմ, թե ինչ եմ փնտրում,-զայրագին դիմեց նա տղային:
Զայրույթից նա ուզում էր լաց լինել:
- Ինչո՞ւ,- չէր հանձնվում աշակերտը:- Այն, ինչ փնտրում եք, պետք է որ արդեն գետնի մեջ անցած լինի:
Նա նստեց առաջին սոճու մոտ, մատներով փոս արեց և այնտեղից մի փոքրիկ տուփ

հանեց:
- Ա՞յս էիք փնտրում,- և նա տուփը մեկնեց ուսուցչուհուն: Ուսուցչուհին զարմանքով հայացքը ուղղեց անսովոր տուփին:
- Հնարավոր է...- ցրված շշնջաց նա: Մի պահ նայեց ժպտացող աշակերտին: «Հավանաբար նա՝ աշակերտս, ցանկանում է աչքս մտնել, խորամանկ»,- մտածեց նա:

Նա տուփը բացեց և այնտեղից հին մագաղաթի մի կտոր հանեց: Դրա վրա ինչ-որ խորհրդավոր նշաններ էին գրված: Ուսուցչուհին հավաքեց լեզուներից իր բոլոր գիտելիքները և, վերջապես, սանսկրիտով բառեր կարդաց: Նա այդ բառերը շշված կարդաց մի քանի անգամ:
- Այդտեղ ի՞նչ է գրված... Գաղտնի՞ք է... Ձեզ համար շատ, շա՞տ կարևոր բան է,- հարցրեց աշակերտը: Բայց ուսուցչուհին այնպես էր խորասուզվել բառերի իմաստը հասկանալու մեջ, որ մոռացել էր աշակերտին: Նա նույնիսկ չնկատեց, թե աշակերտն ինչպես է հավաքում գետնին ցրված ստուգողականի տետրերը:

Ուսուցչուհու դեմքն աստիճանաբար փոխվում էր: Աշակերտին թվաց, որ նա ավելի գեղեցիկ և բարի է դառնում:
«Ականջիդ եմ ասում, քանի որ գաղտնիք է. Ժպիտը Զորություն ունի»:.
Նա այս բառերը կրկնում էր հոգում, սրտում, մտքում...
Եվ վերջապես գլխի ընկավ:
Նա ժպտաց: Ժպտաց այնպես, ինչպես պոետը կժպտար իր ոգեշնչմանը գլուխգործոց ստեղծելուց առաջ:
Աշակերտը, նկատելով ուսուցչուհու դեմքին ժպիտի փայլատակումը, ուրախությամբ բացականչեց.
- Ախր բոլորին ասում էի, որ նա կարողանում է ժպտալ, բայց ոչ ոք ինձ չէր հավատում... Հիմա կհավատան...- և այս ուրախ լուրով վազեց ընկերների մոտ:
Ուսուցչուհին շտապեց նրա ետևից՝ Պայծառացման Ժպիտը դեմքին: Ուրախության արտասուքները, մարգարիտների նման, զարդարում էին նրա Ժպիտը:

«Ժպիտի Իմաստությունն եկավ ինձ մոտ, և այսօրվանից կսկսվի իմ իսկական ուսուցչական կյանքը»: Քայլում և չէր էլ նկատում, որ տրորում է ստուգողականի տետրերը, որոնք թափվել էին առջևից վազող աշակերտի ձեռքից: Դրանք շարվել էին դպրոց տանող արահետի նման:

22. Ժպիտը Զորություն ունի: Դա է Հատուկ Իմաստությունը:
Ժպիտի մեջ է ուսուցչի զորությունն ու իմաստությունը:

Կասեն՝ չէ՞ որ ուսուցման ժամանակակից հզոր միջոցների համեմատությամբ Մանկավարժական Ժպիտը մանրուք է:
Պատասխանում եմ՝ իսկ եթե Ժպիտը կյանքի ավելի հզոր ազդակ է հաղորդում երեխային, քան բոլոր սկզբունքները, մեթոդները և համակարգիչները միասին, դա մանրո՞ւք է:

Կասեն՝ չէ՞ որ ուսուցչի բնավորությունից և տրամադրությունից է կախված՝

երեխաներին ժպտում է, թե չէ:
Պատասխանում եմ՝ ուսուցչից է կախված սեփական կերպարի ստեղծումը, դրա համար էլ նա ուսուցիչ է:

Կասեն՝ բայց չի կարելի ուսուցչին ստիպել ժպտալ աշակերտներին:
Պատասխանում եմ՝ իսկ ո՞վ է նրան ստիպել ուսուցիչ լինել:

Կասեն՝ ինչպե՞ս ստուգենք ժպիտի զորությունն ու իմաստությունը:
Պատասխանում եմ՝ կանգնեք դպրոցի շեմին և հաշվեք, թե քանի ժպիտ են երեխաներն իրենց հետ դպրոց բերում և քանիսն են տանում:

Կասեն՝ մեզ ավելի հեշտ է առանց ժպիտի:
Պատասխանում եմ. . .
Ոչ, չեմ պատասխանում: Հանգած գիտակցությունից պետք է հեռու գնալ:

23. Ժպիտը Զորություն ունի:
Մտածողներն ասում են՝ ծովի խորքերում աղ կա, բայց միայն հոսանքների աշխատանքն է ջրի երես հանում այն:
Մտածողները գրում են՝ սոխակի ձուն իր սաղմի մեջ երգիչ ունի, բայց միայն կյանքի կոչվելուց հետո կլսվի երգը:
Իմ կողմից ասեմ՝ ամեն երեխայի մեջ Արարչի կերպարն է, բայց Արարչին գործընկեր է պետք, որ բացահայտի այդ Կերպարը:
Արդյո՞ք սոխակի ձուն ինքը կարող է էական-համապատասխան պայմաններ ստեղծել, որպեսզի բացահայտի և իրենից ազատագրի երգչին:

Այդպես և երեխան. նա ի վիճակի չէ իր շուրջը ստեղծելու իր էությանը համապատասխան այնպիսի պայմաններ, որպեսզի հայտնաբերի և բացահայտի իր Կերպարը: Պետք են Արարչի գործընկերներ՝ ծնողներ, ուսուցիչներ, դաստիարակներ՝ արդեն մեծ մարդիկ: Երեխան կարող է դաստիարակվել միայն այն դաստիարակի կողմից, ով արդեն դաստիարակված է: Առանց դաստիարակի երեխան մարդ չի դառնա, քանի որ ինքն իրեն դաստիարակել նա չի կարող: Երեխա և կողքին մեծահասակ. էական-համապատասխանության և Կերպարաստեղծման (Կրթության)[1] հիմքը սա է: Նորածնին գայլերին տվեք, և նրանից գայլ կսարքեն:

Երեխան կապված է մեծահասակին:
Բայց մեծահասակները տարբեր են լինում՝ բարի ու չար, սրտով ու անսիրտ, լավ ու վատ, ժպտացող ու անժպիտ:
Եթե մեծահասակը երեխային սիրո և ըմբռնումի մանկավարժական ժպիտներ է պարգևում և նրա հետ ձգտում վեր բարձրանալ, ապա դրանով օգնում է նրան բացահայտելու և զարգացնելու իր Աստվածային Կերպարը:

Իսկ ի՞նչ կլինի, եթե երեխան այդ ժպիտների փոխարեն հայտնվի դրանց հակադրությունների հեղեղում:
Ես գիտեմ, թե ինչ կլինի:

Տեսե՞լ եք՝ ինչպես է կարկուտը ոչնչացնում խաղողի այգիները:
Ես տեսել եմ:
Այ թե ինչ կլինի. ամբողջ բերքը կոչնչանա, և Կերպարի բացահայտում չի լինի:
Կեղծը կեղծիք է ստեղծում:
Ժպիտը Լույսի նկատմամբ ընկալունակ է դարձնում երեխային:
Կոպտությունը խանգարում է Լույսի ընկալմանը:

24. Ժպիտը Յուրահատուկ Իմաստություն է:
Դաստիարակությունն Անկրկնելիության Օրենքով է կառուցվում. յուրաքանչյուր մարդ կարող է Կերպավորվել միայն մեկ անգամ:
Մանկությունը երկրորդ անգամ չի տրվում, որպեսզի հնարավոր լիներ ամեն ինչ զրոյից սկսել, Կերպավորման ուրիշ գաղափար ընտրել նրա փոխարեն, որն իրեն չէր արդարացրել: Լավագույն մանկավարժական հաջողությունների հասնելու նպատակով փորձի և սխալների ճանապարհը վտանգավոր է նրանով, որ թույլ տված սխալները հնարավոր չէ ուղղել ուրիշ փորձերով: Երեխայի անձի զարգացման հարցում որևէ «մանրուքի» անտեսումը կարող է տխուր, նույնիսկ, ողբերգական վախճան ունենալ: Կերպարի բացահայտման ճանապարհից շեղումը երեխային հեռացնում է կյանքում նրա կոչումից:

Ինչպե՞ս վարվենք:
Մեզ դեռ հայտնի չէ այն Բացարձակ Մանկավարժությունը, որի օգնությամբ կկարողանայինք երեխաների մեջ ամբողջությամբ պահպանել նրանց ճակատագիրը: Այդպիսի մանկավարժությունն առայժմ միայն հանգամանքների երջանիկ բերումով է լինում, որը հաճախ չի պատահում, և որի օրենքները մեզ անհայտ են:
Խոտը բետոնը ծակում դուրս է գալիս, բայց մի՞շտ է այդպես, արդյո՞ք բետոնի տակ եղած բոլոր սերմերն են պայմաններ ունենում:

Մենք գիտենք այն ակունքները, որտեղից կարող ենք վերցնել ամենաճիշտ մանկավարժական մոտեցումները, բայց պետք է կարողանանք վերցնել: Այդպիսի ակունքներ են Արարչի առաջ պատասխանատվությունը՝ երեխայի Կրթության համար, զգացմունքագիտությունը, ինտուիցիան, Դարերի Իմաստությունը, սիրով և հավատով ամրացված ձգտումը:
Իմաստությունը մերժում է Կրթության մեջ բռնությունը, որպես ավերիչ ուժ:
Իմաստությունը հաստատում է Ժպիտը՝ որպես Կրթության ստեղծարար ուժ:

25. Ժպիտը Յուրահատուկ Իմաստություն է
Բայց Իմաստությունն այն չէ, որ Ժպիտը մանկավարժի դեմքից չիջնի: Այլ այն է, որ սրտով զգան, թե ում, երբ և ինչ ժպիտով ժպտան, որ Ժպիտի էներգիան երեխայի կողմից ընդունվի:
Ճշմարտության պահին ցուցաբերած ժպիտը կարող է հրաշքներ գործել դաստիարակության մեջ:
Մանկավարժական Ժպիտը, որպես ուսուցչի հոգեկան վիճակ, որպես նրա ոգու որակ, մշտապես ուղեկցում է նրան, նա ավելացնում է իր մեջ ժպիտի զորությունը,

ինքը դառնում է Ժպիտ և իր շուրջը տարածում բարու և հույսի արտահոսք: Այս վիճակը նրա ամենամեծ ձեռքբերումն է, այն լիքն է նրա ոգու նվերներով: Եվ որսալով ճշմարտության նուրբ պահերը կամ ստեղծելով դրանք՝ ուսուցիչն իր ներքին աշխարհից ճառագում է ժպիտի անհրաժեշտ սպեկտրը: Իսկ աշակերտն այդ պահին ուրախություն, թեթևացում, հաջողություն, հանգստություն է զգում, այն, ինչը այդ պահին իրեն հենց պետք էր:

26. Որտե՞ղ ես, Ժպիտ իմ: Պետք է փրկել ինձ՝ ուսուցչիս:
Ես Լույսի կրողն եմ, բայց Լույսից մարդիկ թաքնվում են: Նրանք վարժվել են խավարի աղոտ թարթումին: Դրա համար էլ նրանք փչեցին իմ կերոնի բոցի լեզվակները, և ձեռքիս է կերոնս, որի ծայրին դժվարությամբ առկայծում է մի լեզվակ: Կհանգչի դա էլ, և կտիրի բացարձակ խավարը: Մարդիկ ինձ՝ ուսուցչիս, ստիպում են, որ իրենց երեխաներին ոչ թե սովորեցնեմ, թե ինչի համար է կերոնը, ինչպես վառել, և ինչու չի կարելի հանգցնել, այլ սովորեցնեմ, թե ինչից է կազմված մոմը, նրա մոլեկուլային բաղադրությունը, և ինչպես է հնարավոր դրանից կերոն պատրաստել: Չեն ուզում, որ իրենց երեխաներին սովորեցնեմ, թե մեղուն ինչու է մարդուն մեղր տալիս, իսկ Աստծուն՝ մոմ, և ինչու է մոմի բոցի լեզվակը դեպի վեր ուղղված:

27. Որտե՞ղ ես, Ժպիտ իմ: Ես կորցնում եմ տեսողությունս:
Ես Մշակույթի ուսուցիչն եմ, իսկ Մշակույթը Լույսի պաշատամունք է: Ցավոք, մարդիկ, աստիճանաբար, սկսել են մշակույթ համարել այն ամենը, ինչը հագուրդ է տալիս իրենց ճղճիմ զգացմունքներին: Նրանք ինձանից՝ իրենց ուսուցչից, պահանջում են, որ իրենց երեխաներին ոչ թե սովորեցնեմ լույսի պաշտամունքը, այլ զինեմ նրանց հաշվելու գիտելիքներով և նրանց մեջ զարգացնեմ ճարպկություն՝ օգուտով վաճառելու այն ամենը, ինչ «մշակույթ» է կոչվում: Շուրջը ամբողջովին մթնում է, և ես էլ արդեն ահա-ահա կհավատամ, որ մութը հենց ինքը Լույսն է, և նրան պետք է պաշտել:

28. Որտե՞ղ ես, Ժպիտ իմ: Խեղդվում եմ:
Ես Կյանքի ուսուցիչն եմ, որ Դարերի Իմաստության կայծերից է բոցավառվում և Ապագային ուղղված Մտքերից: Բայց մարդիկ կանգնեցրել են իրենց կյանքը, նրանց պետք չէ Դարերի Իմաստությունը, և Ապագային ուղղված Մտքերից ձերբազատվել են: Նրանք ստիպում են ինձ՝ Կյանքի ուսուցչիս, որ իրենց երեխաներին սովորեցնեմ ոչ թե այն, թե ինչպես կյանքում վերին ուղիներով գնան, ինչպես ձևափոխեն Կյանքը, այլ՝ թե ինչպես հարմարվեն և տեղավորվեն քայքայվող մարմնում:

29. Որտե՞ղ ես. Ժպիտ իմ: Ուր որ է խլանում եմ:
Ես Բարձրագույն Աշխարհների, Հավերժության, Անսահմանության և Անմահության մասին մտքի ուսուցիչն եմ:
Բայց մարդիկ Բարձրագույն Աշխարհների և Անսահմանության մասին մտածել չեն ցանկանում: Նրանց համար Բարձրագույն Աշխարհն սկսվում է իրենց սեփականության զգացումից, իսկ ակնթարթն Անմահություն են համարում: Նրանք պարտադրում են ինձ՝ Բարձրագույն Աշխարհի ուսուցչիս, իրենց երեխաներին

գիտելիք տալ այն մասին, թե ինչպես կարող են պայթեցնել և՛ Բարձրագույն Աշխարհը, և՛ Երկրային Աշխարհը, որպեսզի հիանան այդ պայթյունի դղրդյունից, զոհերի և աղետների առատությունից, որպեսզի կարողանան հպարտանալ իրենց ամենակարողությամբ թե՛ Երկրի վրա և թե՛ տիեզերքում:

30. Որտե՞ղ ես, ժպիտ իմ: Ես ուժասպառ եմ:
Ո՞վ է ինձ խանգարում լցվել քեզանով և սիրով ու գեղեցկությամբ ընդունել նորեկներին, որ թակում են մեր մոլորակի դուռը: Ես Բարության ուսուցիչն եմ և պատանիների սրտերը կարող եմ վառել հանուն մարդկանց բարիքի սխրանքի բոցով: Բայց մարդիկ դադարել են բարությանը և սխրանքին հավատալուց: Յուրաքանչյուրը փորձում է հաջողացնել ու վեր կանգնել մյուսներից: Նրանք ինձ՝ Բարության ուսուցչիս, ստիպում են, որ իրենց երեխաներին սովորեցնեմ իշխել իրար և նրանց մեջ ինքնությունը զարգացնեմ:

31. Որտե՞ղ ես, Ժպիտ Իմ: Չորանում եմ:
Ես սրտի ուսուցիչն եմ:
Բայց ինչ-որ նվաստ ուժ ստիպում է ինձ, որ իմ սրտում այրեմ և իմ դեմքից վերացնեմ քո ակունքները, քո ջերմությունը, քո բույրը, քո հմայքը և քո կենսատու ուժը:
Չորանում է հոգիս, ես վերածվում եմ մումիայի, խրտվիլակի: Եվ որպեսզի երեխաներն ինձնից չփախչեն, իշխանության ուժով եմ պահում նրանց: Դեմքս ծամածռվում է կայծակի նման, ձայնս շաչում է, ինչպես ամպրոպ, իմ մանկավարժությունը վերածվում է տարերային աղետի: Եվ, վա՛յ ինձ, որ մարդիկ չեն պահանջում՝ վերադառնամ իմ Լույսի ակունքներին:

32. Որտե՞ղ ես, ժպիտ իմ: Դեռ ուշ չէ:
Քանի դեռ Երկինքը երեխաներ է ուղարկում, նշանակում է՝ հույս կա:
Պետք է ի մի բերեմ ամբողջ Կամքս: Թող Կամքս Աստված դառնա իմ մեջ:
Որոշել եմ սխրանք գործել և հերոսաբար ապրել ուսուցչական իմ կյանքը:
Հակառակ ամեն ինչի՝ քեզ, Ժպիտ իմ, վերածնում եմ իմ սրտում:
Ջարդում եմ գիտակցությանս բոլոր արգելքները, վերացնում եմ բոլոր պայմանականությունները:
Իմ մանկավարժական դաշտում հազարավոր, միլիոնավոր ժպիտներ կտնկեմ՝ ծիածանի գույներով, և այնտեղ տոն կկազմակերպեմ բոլոր երեխաների համար:
- Երեխաներ,- կասեմ,- ճանաչո՞ւմ եք ինձ: Ձեր ուսուցիչն եմ: Վերադարձրել եմ ժպիտս և հայտնվել նորովի:
Ձեզ համար պատրաստել եմ Կենաց Գիրքը և Աղավնյաց Լեզուն:
Նստեք իմ հրաշալի դաշտում: Ցանկանում եմ ձեզ սովորեցնել ապրել Ապագային ուղղված Մտքով:

33. Ես ուսուցիչ եմ
Ես Սեր եմ ու Հավատարմություն, Հավատ ու Համբերություն:
Ես Ուրախություն եմ ու Ապրումակցում, Տառապանք ու Կարեկցանք:
Ես ճշմարտություն եմ ու Սիրտ, Խիղճ և Արժանապատվություն:
Ես Փնտրող եմ ու Նվիրող, Աղքատ և Հարուստ:
Ես Ուսուցիչ եմ ու Սովորող, Դաստիարակ և Սան:

Ես Ճանապարհ Բացող եմ և Կյանքի Նկարիչ:
Ես Մանկության Կացարան եմ և Մարդկության Օրրան:
Ես Ապագայի Ժպիտն եմ և Ներկայի Ջահը:
Ես Աստծո կողմից ուսուցիչ եմ և նրա Աշխատողը:

34. Ես ուսուցիչ եմ և այդ պատճառով ինձ պետք է ոչ հասարակ, ասենք, բարի կամ քաղաքավարի, ժպիտ: Ինձ հարկավոր են յուրահատուկ ժպիտներ և այնքան տարբեր, որքան երեխաներն են, և այնքան տարբեր, որքան յուրաքանչյուրի տրամադրությունների փոփոխությունները: Հարկավոր է, որ ժպտամ երեխային մի ժպիտով, որը միայն նրան է պետք և միայն այդ պահին:

Աղոթում եմ քեզ, սիրտ իմ, իմաստություն տուր, որ հասու լինեմ երեխաների կյանքի ճշմարտության պահերին:
Կոչում եմ քեզ, իմ գիտակցություն, ծավալվիր մինչ Անսահմանություն, խորացիր մինչ Անվերջություն և թույլ տուր նայեմ երեխաների հոգու այն անկյունները, որտեղ իմ ներկայությունն անհրաժեշտ է:

Միայն այդպես կարող եմ յուրաքանչյուր երեխայի ժպտալ միայն նրա համար հյուսված ժպիտով:
Մտածողներն ասում են. «Ի՞նչն ավելի լավ կմաքրի հոգին, եթե ոչ ուրիշների բարօրության մասին մտքերը»:
Սիրտ իմ և գիտակցություն իմ, ամուր կառչեք երեխաների մասին բարի մտքերից:
Երեխաները դրանց կարիքն ունեն, իսկ ես՝ ուսուցիչս, երեխաների համար եմ ծնվել:
Ես էլ դրանց կարիքն ունեմ, որպեսզի ավելի լավ լվանամ և մաքրեմ իմ հոգին:

Ասված է. «Ի՞նչը հոգին ավելի լավ կկոփի ամրության զրահով, եթե ոչ ուրիշներին դեպի Լույսը տանելու ցանկությունը»:

Օգնիր իմ սրտին, գիտակցություն իմ, որ ուղղի ցանկությունս երեխաներին դեպի Լույս տանելու, և հենց դրանով էլ իմ հոգին կկոփեմ ամրության զրահով:

Նաև ասված է. «Ի՞նչը կհյուսի լավագույն ժպիտը, եթե ոչ ամենավերջին երեխային ծիծաղելիս տեսնելու գիտակցությունը»:

Ուրեմն, գիտակցություն իմ, առաքիր մտքերի սուրհանդակներին անսահման Տիեզերք և լցվիր Կրթության Տիեզերական Իմաստությամբ, քանի որ երկրային մանկավարժությունը մեզ չի բավականացնում, որպեսզի ստեղծենք լավագույն ժպիտը՝ ողջ Երկրի երեխաների զրնգուն և ուրախ ծիծաղի համար:
Երազում եմ ուսուցչական լավագույն ժպիտն ունենալու երջանկության մասին:

35. Տղաս, դժվա՞ր է այս ինտեգրալը հասկանալը: Բայց ո՞րն է դժվարությունը:
Գուցե դուրդ չի գալիս, քանի որ այնքան էլ գեղեցիկ տեսք չունի՞:
Բայց ասում են՝ գիտությունը սքանչելի է:
Եթե քեզ ինտեգրալը դուր չի գալիս և այդ պատճառով չես ցանկանում յուրացնել այն, այդ դեպքում հանուն ինձ, հանուն քո ուսուցչի յուրացրու, որպեսզի

արդարացված լինեն իմ ջանքերը:
Հանուն ինձ, տղաս: Իսկ ես քեզ համար ինչ ասես, որ չեմ անի:

Ահա քեզ իմ խնդրանքի ժպիտը: Օգնիր ինձ այս անգամ, իսկ հետո ուրիշ ինտեգրալների համար ես ավելի գեղեցիկ մանկավարժական զգեստներ կփնտրեմ, որպեսզի նրանք քեզ դուր գան, և որպեսզի վերանա խայտառակ ինտեգրալի դժվարությունը:

36. Աղջիկս, աչքերդ մատնում են, թե ինչպես է վախեցրել քեզ իմ ինտեգրալը:
Չէ, ինտեգրալը չէ, այստեղ նա կապ չունի, այլ քո ուսուցչի կերպարը, որ քեզ չի լքում ինտեգրալի մասին մտածելիս: Կարծում ես՝ եթե չկարողանաս նրա հախից գալ, կզայրանա՞մ քեզ վրա, քեզ դմբո կանվանեմ, կասեմ՝ չի կարելի հարյուր անգամ նույն բանը բացատրել: Կարծում ես՝ առիթից օտվելով՝ քեզ վատությու՞ն կանեմ: Նշանակում է՝ քո դժվարությունների պատճառը ոչ թե ինտեգրալն է, այլ ես՝ քո մեջ արմատացած իմ կերպարը: Նա է խառնում քո մտքերը, ցրում քո հնարամտությունը, աղավաղում իրականությունը, քեզ տհաճություն հրամցնում, ճի՞շտ է:

Ներիր ինձ, խնդրում եմ, չեմ ցանկանում, որ քո մեջ ապրեմ խարդախի և ուխտադրուժի կերպարով: Այո, սխալվել եմ՝ մտածելով, որ միայն իմ գնահատականների ու գնահատանիշերի խստությունը քեզ մարդ կդարձնի: Կանչում էի ծնողներիդ և նրանց նախատում, ասում, որ իրենց աղջիկը ետ է մնում, թերզարգացած է, և կարծում էի, որ այդպես է պետք:

Բայց ես փոխվել եմ, փոխվում եմ, ես ապաշխարում եմ, ներողություն եմ խնդրում քեզանից:
Նայիր իմ դեմքին, զգո՞ւմ ես իմ սրտի ժպիտը: Այն դեռ թույլ է, բայց իմ սիրտն այն միայն քեզ համար է հյուսում և քեզ է օգնության կանչում: Նվիրում եմ քեզ իմ ժպիտը և կնվիրեմ մեր յուրաքանչյուր հանդիպման ժամանակ, իսկ երբ չհանդիպենք, իմ մտքերով կուղարկեմ: Դրանում իմ նվիրվածությունն է քեզ: Կնվիրեմ այն քեզ, որպեսզի քո մեջ արմատացած ուխտադրուժ ուսուցչի կերպարը փոխեմ նվիրված ընկերոջ կերպարով:
Իրականում ինչի՞ս են պետք այդ գնահատականներն ու գնահատանիշերը, երբ կաս դու՝ բոլոր թվերի Անվեջությունը: Թույլ չեմ տա, որ դրանք պղտորեն մեր ընկերությունը: Իսկ ինտեգրալը նորից ու նորից կբացատրեմ՝ համբերատար, հավատով և ժպիտով:

Հավատա միայն, որ ես արդեն այն ուսուցիչը չեմ, որը…
Արի հաշտվենք և հավերժական ընկերության ժպիտով ժպտանք իրար:

37. Տղաս, էս ի՞նչ ես անում իմ ինտեգրալը: Ասում ես, որ այն շատ հեշտ է և զվարճացնո՞ւմ է քեզ:
Զարմանքի և հիացմունքի իմ ժպիտը քո հանճարի համար պատրաստում է նոր, դժվար, դժվարագույն ինտեգրալների բանակ: Բայց գիտեմ՝ դրանք քեզանից վախենում են, նույնիսկ ամենա-ամենադժվար ինտեգրալներն են վախենում, քանի որ դու դրանց քո ստրուկն ես դարձնում: Ուրեմն՝ քո մասին են մտածողներն ասում.

«Գիտելիքի ժպիտը վերացնում է դիտավորյալ արգելքների փականները»:
Բայց որպեսզի քո ստրուկները ոչ այնքան իրենց տիրոջ հաղթանակը ցուցադրեն, որքան նրա ձգտումը՝ ուղարկելու ինտեգրալների ամբողջ բանակը բարիք հաստատելու, քո սիրտն անդադար կողողեմ մեծահոգության ժպիտով:

38. Երեխանե՛ր:
Ամեն առավոտ մենք ժպտում ենք բացվող օրվան՝ Ապագայի մասին մտքերով:
Ժպտում ենք միմյանց ընկերական և բարի ժպիտներով:
Ժպտում ենք Դասին իմացումի և առաջընթացի ուրախության ժպիտով:
Մեր մեջ աճեցնում ենք Կամքի Ժպիտը, դեպի Բարձրյալը Ձգտման ժպիտը, Սխրանքի Ժպիտը, Ստեղծագործության Ժպիտը:
Գիտենք, որ ժպիտները հասարակ խաղալիքներ չեն, որ զարդարում են մեր առօրյա կենցաղի մութ կողմերը, մեր ներաշխարհի ստվերները: Դրանք նվերներ չեն, որոնցից չգիտես, թե ինչպես ազատվես:

Ժպիտները մարդկանց հավերժական կապն են, նրանց ուժն ու ամրությունը:
Դրանք մեր սրտի բաբախյունն են մեր հարազատի և հասարակության բարօրության համար:

Ժպիտները հոգու թևերն են:
Ինչպե՞ս կարող են մեր կյանքն ու աշխարհը մեր շուրջը փոխվել, եթե ժպիտներն աշխարհում և մեր կյանքում հարյուր, հազար, միլիոն անգամ ավելի շատ լինեն, քան հիմա են:
Երկնքում նոր աստղեր կվառվեն, քանի որ ամեն մի աստղ մարդու ժպիտ է:
Տառապանքն ու հիվանդությունները կանհետանան:
Մարդիկ կսկսեն երկար ապրել՝ երկու հարյուր, երեք հարյուր տարի, միգուցե հազար:
Նրանք կսովորեն թռչել:
Մարդիկ բառերը քիչ կօգտագործեն, կսովորեն մտածել և խոսել ժպիտներով:
Չարությունն ու ատելություն կմոխրանան, կմոխրանան մարդկանց թերությունները:
Մարդիկ ավելի գեղեցիկ ու հմայիչ կդառնան:
Նրանց ձեռքերը կստեղծեն ժպիտների նման իրեր:
Մարդկային ժպիտներով հագեցած օդը շոյող կդառնա:
Յուրաքանչյուր մարդ կբացահայտի իր Աստվածայնությունը:
Մեր աչքերը Երկնային Թագավորությունը կտեսնեն:

Ժպտացե՛ք, երեխանե՛ր:
Միայն դուք կարող եք բազմապատկել ժպիտները և մոտեցնել համընդհանուր երջանկությունը:

39. Չե՞ք ցանկանում արդյոք ժպիտի հետ կապված մի դեպք հիշել ձեր կյանքից:
Ինձանի՞ց սկսենք: Լավ:
Մանկուց է իմ մեջ ապրում ժպիտը, որը դարձել է իմ բարի ուղեվարը, թալիսմանը և դաստիարակը:
Այդ ժպիտը փոստով եմ ստացել՝ եռանկյունաձև նամակի մեջ:

Ժպիտը մոխրագույն թղթի կտորի վրա էր գրված:
Այն ինձ հայրս էր ուղարկել ռազմաճակատից, ուր գնացել էր մարտնչելու ֆաշիստների դեմ:
1942 թ. դեկտեմբերյան մի մռայլ առավոտ էր, և այդ ժամանակ ես տասը տարեկան էի:
Շուրջը ցուրտ էր, սով, աղքատություն, վախ ու պատերազմ:
Հայրս ինձ ընդամենը մի քանի բառ էր գրել, ըստ երևույթին, շտապելիս էր եղել:
«Ես հավատում եմ քեզ, տղաս, ես սիրում եմ քեզ»,- և վերջ:
Դա նրա վերջին նամակն էր, այն ստացա, երբ հայրս այլևս չկար. նա զոհվել է ճակատամարտում:
Ես հաճախ եմ պատկերացնում, թե ինչպես էր նա ժպտում և գրում այս բառերը, որոնք վերածվում էին Ժպիտի:
Հորս սիրո և հավատի ժպիտը այդ ժամանակվանից ապրում է իմ մեջ:
Նա ինձ պաշտպանում է չարից ու նախանձից:
Նա ինձ թույլ չի տալիս չար ու նախանձ դառնալ:
Ահա այդպիսի՝ ռազմաճակատից ուղարկած հայրական ժպիտ է ապրում է իմ մեջ:
Այդ ժպիտը դարձել է իմ խրատատուն:

40. Թանկագին գործընկերներ:
Ինչո՞ւ ենք մանկավարժական խորհրդի ժամանակ ոչ ոքի պետք չեկող պատրաստի հարցեր քննարկում, երբ կենսական ճառագայթման խնդիր ունենք:
Մենք շնչահեղձ ենք լինում, խեղդում ենք ինքներս մեզ, խեղդում ենք մեր աշակերտներին:
Օր օրի դպրոցում մեր ժպիտներից ավելի ու ավելի քիչ է մնում: Ուր որ է ժպտալուց բոլորիվին ետ կվարժվենք:
Մենք խելացի մարդիկ ենք, և դժվար չէ հասկանալ, թե Կրթական տարածությունում ինչ կլինի, երբ վերջին ժպիտները մարեն:

Թող ֆիզիկայի ուսուցիչը մեզ ասի, թե ինչ կպատահի մեր մոլորակին և մեզ, եթե երկրի ձգողականության ուժը մարի այնպես, ինչպես ժպիտները՝ դպրոցում:
Թող կենսաբանության ուսուցիչն ասի, թե ինչ կպատահի մեր օրգանիզմին, եթե բջիջները հրաժարվեն նյութափոխանակումից, ինչպես մենք ենք հրաժարվում մեր երեխաներին ժպտալուց:
Առանց ուսուցչական ժպիտների դպրոցը հոգեհեղձարան է դառնում:
Երեխաներն առանց դրանց թառամում են, ինչպես ծաղիկներն են թառամում՝ առանց կենսատու խոնավության և արևի լույսի:

Մեզ ավելի շատ նրանց գիտելիքներում բացթողումներն են անհանգստացնում, զայրացնում է նրանց հանդգնությունը: Նրանց գլխին խրատ ենք կարդում, պատժում ենք, երկուս ենք նշանակում, ծնող կանչում: Եվ ուսուցիչների սպառնալիքների ու կոպտության այս անհավասարակշիռ մանկավարժությունը պտտվում է սերնդից սերունդ:

Գործընկերներ, խեղդվո~ւմ ենք. չե՞ք նկատում:
Մեր աշակերտներն են խեղդվում:

Խեղդվում ենք և խեղդվում են, որովհետև մենք Կրթական տարածության էկոլոգիան ենք խախտել: Կրթական տարածությունը կոպտություն, ծաղրանք, վիրավորանք, սպառնալիք, ծաղրուծանակ, նյարդայնություն, անհամբերություն, գոչյուններ, արգելքների հեղեղ և դատարկ պահանջներ չի հանդուրժում: Այս ամենը ուղղված է երեխաների դեմ՝ ոչ թե հոգուտ նրանց, այլ ի վնաս:
Ի~նչ վատ է հնչում՝ մեր երեխաների, մեր աշակերտների դեմ:

Կրթական տարածքը Աստծու տաճար է, սուրբ վայր է:
Յուրաքանչյուրը գիտի, որ տաճարում բղավել, կոպտել, ծաղրել չի կարելի:
Յուրաքանչյուր ոք գիտի, որ տաճարում պետք է սրտի և հոգու ժպիտը Արարչին հղել, հոգում պետք է ժպտալ բոլոր Լուսավոր Հրեշտակներին: Պետք է սիրով լցված գավաթով Տաճար մտնել:
Կրթական տարածքը նույնպես Տաճար է, այո-այո, Տաճար է, Տաճար:

Այստեղ պետք է խորհուրդ լինի՝ երեխայի Կերպարի բացահայտումը, որ նրա մեջ Արարիչն է դրել: Իսկ այդ խորհուրդը մենք՝ ուսուցիչներս ենք իրականացնում, քանի որ մենք «Աստծո գործընկերներն» ենք: Իսկ խորհուրդն իրականացվում է միայն սիրով՝ սքանչելի, սրտային, ոգեղեն և անձնազոհ սիրով:
Այդ սերն էլ ծնում է իր օգնականներին՝ ժպիտներին, որոնք նույնքան սքանչելի են, զգայուն, նուրբ, նվիրված, անձնազոհ, ինչպես ինքն է:

Գործընկերներ:
Տաճարում մոմ են վառում:
Ինչքա~ն վեհաշուք և խորհրդավոր է տաճարը, երբ այնտեղ մոմեր են վառում՝ հարյուրավոր, հազարավոր: Մի մասը վառվում-վերջանում է, մյուսները նոր են վառվում:
Մեր ժպիտները նույնպես մոմեր են, որոնք երբեք չպետք է հանգչեն Կրթության Տաճարում: Մեր ժպիտների կրակը կարող է իսպառ մոխրացնել մութ ուժերի ամբողջ մանկավարժությունը: Ժպիտը զորություն ունի: Այն ընդունակ է մռայլ եղանակը վերափոխելու արևայինի:

Գործընկերներ:
Դպրոցական կյանքում ոչ մի թարմացում չի լինի, եթե յուրաքանչյուրս չթարմացնենք մեր հոգիները:
Տալու օրենքը հաղթում է՝ տվողները պետք է ստանան:
Երեխաները մեծանում են, և մենք ստանում ենք:
Ի՞նչ ենք ստանում:

41. - Դու կրկի՞ն տնային աշխատանք չունես:
- Բայց չէ՞ որ ձեզ բացատրեցի. . .
- Դո՛ւրս արի դասարանից…թող հայրդ գա:
- Բայց արդեն բացատրել եմ. . .
- Դո՛ւրս կորիր դասարանից:

- Բայց Ձեզ ասացի. . .
- Խլացե՞լ ես: Բավական չէ, որ խուլ ես, դու նաև սրիկա ես. . . Դո՛ւրս արի, լսու՞մ ես:
- Ինչո՞ւ եք կոպտում... Չէ՞ որ ասացի Ձեզ. . .
- Դա քո ընկերուհուն ասա. . . Դո՛ւրս դասարանից. . .

Տղան ամաչում էր իր սիրած աղջկա կողմը նայելուց, որին ձեռքի հետ վիրավորեցին: Նա չարացած նայեց իր մայրենի գրականության ուսուցչուհուն, թքեց նրա երեսին և դուրս վազեց դասարանից:
Պետք է հասնել հետևից, կանգնեցնել նրան:

Դո՞ւք եք հերթապահ ուսուցիչը:
Օգնեք, խնդրում եմ, միջանցքով վազող տղային, նա վատ է զգում, նրան վիրավորել են, ամենաթույլ տեղից են խոցել: Նա հուսահատված է: Մարդկություն, ըմբռնում կամ գոնե քաղաքավարություն ցուցաբերեք:
- Ապա կանգնի՛ր,- փախչողի ետևից գոռում է հերթապահ ուսուցիչը:-Կանգնիր, ո՞ւմ եմ ասում:
Իսկ ինչո՞ւ այդքան կոպիտ, հերթապահ:
Վազեք նրա ետևից, դրսևորեք ձեր սրտացավությունը: Նա դպրոցի ապագա փառքն է: Նա երեք օր դուրս չէր գալիս տնային լաբորատորիայից, պատրաստել էր նոր սարքավորում և փորձեր էր անում:
Նա նոր բացահայտման շեմին է:
Դե, հերթապահ, փրկի՛ր նրան:
- Հիմա՛ր,- գոռաց հերթապահ ուսուցիչը:

Դասարանից դուրս է վազում սիրած աղջիկը՝ ամբողջովին կարմրած, և ցանկանում է հասնել նրա ետևից:
Հերթապահ, մի՛ կանգնեցրեք աղջկան, թողեք՝ հասնի, թող խոսեն, միգուցե փրկությունը հենց նա է:
Հերթապահը փակեց աղջկա ճանապարհը:
- Ի՞նչ է պատահել: Գնանք տնօրենի մոտ:
Եվ աղջիկը չի կարողանում դուրս պրծնել հերթապահ ուսուցչի ամուր ձեռքերից:

Իսկ երիտասարդը վազում է փողոցով:
Այդ դեպքում գոնե դուք, հարգելի անցորդներ, գոնե ինչ-որ մեկը ձեզանից կնկատի՞ տղայի հոգեկան բարդ վիճակը: Նա վիրավորված է մինչև հոգու խորքը. մայրենի գրականության ուսուցչուհին է նրան վիրավորել: Տեսնո՞ւմ եք՝ վազում է գժի պես: Կանգնեցրեք նրան, մի բան հարցրեք, մի քանի րոպեով շեղեք ուշադրությունը:
- Այ քեզ հիմար, փողոցով քայլել չի կարողանում, ինչ էլ բոյով է,- տղայի վրա կատաղած փնթփնթում է մի անցորդ:
Տղան վազելով մտավ դեղատուն:

Սպիտակ խալաթով հարգելի տիկին, ձեզ կարծեմ դեղագործ են կոչում, բայց չէ՞ որ դուք նաև մարդ եք: Հիմա ամբողջ հույսը ձեզ վրա է: Դեղեր դուրս չգրեք, նրան ասացեք, որ դուք չունեք այդ դեղերից, և որ այդ դեղերը քաղաքի ոչ մի դեղատանը

չկան: Նայեք նրա աչքերին, չէ՞ որ համարյա բժիշկ եք, և կհասկանաք, թե նրա ինչին են այդ քանակությամբ հաբերը հարկավոր:
- Հինգ տուփ,- ասաց նա ¨ խնամքով փաթաթված պատվերը տղային տվեց: Նրան հաճնարարված է վաճառել այն ամենը, ինչը գնում են, և ոչ թե մարդկանց փրկել:

Տղան վազքով մտավ իր շենքի մուտքը:
Հարևա՛նը. ի~նչ լավ է, որ աստիճաններով իջնում եք: Տեսնում եք, որ տղան ժամանակից շուտ է վերադառնում տուն: Նա ձեզ որդու տեղ է գալիս: Տեսեք՝ ինչ ճակատագրական վճռականություն կա մեջը:
Դուք հիմա միակ մարդն եք, որ կարող է փրկել նրան այդ հուսահատ քայլից:
Այո, նա տաօրինակ է, բայց չէ՞ որ ոչ մի անգամ հարևաններից ոչ մեկին չի վիրավորել ու չի կոպտել:
Երբևէ ձեր շենքը հայտնի կդառնա նրանով, որ նա է այստեղ ապրել:

Տեսնում եք՝ ինչպես է վազում աստիճաններով, հրեց Ձեզ ու ներողություն անգամ չխնդրեց: Այդպիսի բան դեռևս չէր եղել: Ավելի ուշ կիմանաք, թե ինչպես է նրան վիրավորել մայրենի գրականության ուսուցչուհին, հասկանո՞ւմ եք, մայրենի գրականության: Հետո դուք մյուս հարևանների հետ միասին կզայրանաք և կհիշեք, թե այդ օրը որքան անսովոր էր վարվում:

Բայց հիմա՝ այս պահին, դուք նրան կարող եք փրկել: Վազե՛ք նրա ետևից և նրան մենակ մի՛ թողեք:
- Կուրացե՞լ ես,- փնթփնթում է դժգոհ հարևանը,- գժվե՞լ ես, ի՞նչ է: Նա բացում է իրենց բնակարանի դուռը:
Թղթի կտորի վրա մատիտով գրում է. «Ներիր, մայրիկ, բայց ես այլևս այսպես ապրել չեմ կարող», և թողնում է գրությունը սեղանին:

Գոնե ինչ-որ մեկն այս պահին զանգահարեր նրան... Իհարկե, մայրենի գրականության ուսուցչուհին դա չի անի: Նա չարացած իր դեմքից մաքրեց թուքը և փնչաց տղայի ետևից վազող աղջկա վրա. «Դու էլ գնա», ու բոլորի ներկայությամբ հայտարարեց. «Նրանց վրա էժան չի նստի, ես դեռ ցույց կտամ նրանց»:

Չի զանգհարի նաև հերթապահ ուսուցիչը: Դո՞ւրս են արել տղային: Ուրեմն այդպես էր պետք: Մայրենի գրականության ուսուցչուհին հմուտ, փորձառու մանկավարժ է: Չի սխալվում: Հերթապահ ուսուցիչը պինդ բռնել էր աղջկան և ուժով ցանկանում էր տանել տնօրենի մոտ: Վերջապես աղջիկը դուրս է պրծնում և վազում, որ հասնի իր սիրած տղային: Գոնե նա հասցնի, գոռա, որ ինքն այդտեղ է և սիրում է նրան:

Ոչ ոք չի զանգհարում, դուռը չի թակում, չի կանչում:

Տղան մտնում է իր փոքրիկ լաբորատորիան, որն այնքան սիրում էր և որտեղ անքուն գիշերներ էր անցկացրել: Նա այդպես էր անցկացրել նաև վերջին երեք գիշերները՝ մոռանալով աշխարհում ամեն ինչ, նույնիսկ սիրած աղջկան:
Նա ժպտաց իր պատրաստած սարքին, որը մի քանի տարի հետո կոչվելու էր իր

անունով: Կասեն նաև, որ իններորոդ դասարանցին զարմանալի հայտնագործության շեմին էր:

Նա նստեց բազկաթոռին:
Միանգամից մի բուռ դեղ կուլ տվեց:
Շուտով նա սուզվեց անգոյության մեջ:
Ընդմիշտ գնաց:

42. Ըմբռնումի ժպիտ: Ինչո՞ւ էիր լքել մայրենի գրականության ուսուցչուհուն՝ նրան միայնակ թողնելով իր մեջ կուտակված չարության հետ:

Եվ դու, կարեկցանքի ժպիտ: Քեզ համար դժվա՞ր էր հերթապահ ուսուցչի կոպտացած սիրտը մարդկայնացնել:
Օ~, դո՛ւ, Մեծն Ժպիտ:

Վիճակագրությունը պաշտոնական լեզվով հաղորդում է. «միջին հաշվով»:
Ուսուցիչների և ծնողների հետ ունեցած խնդիրների պատճառով ամեն օր միջին հաշվով 17 դպրոցական է ինքնասպանության գործում:
Միջին հաշվով մի քանի հարյուր երեխա ամեն օր մանկատներից փախչում է մանկավարժների կոպիտ և դաժան վերաբերմունքի պատճառով:
Ամեն օր միջին հաշվով հազարից ավելի դեռահասներ են տանից փախչում հարազատ մարդկանց՝ իրենց իսկ երեխաների նկատմամբ բռնության պատճառով:
Միջին հաշվով ամեն օր…

Օ~, դու, Մեծն Ժպիտ…
Մեծ Երկրի ուսուցիչներիս, ամբողջ Երկիր մոլորակի ուսուցիչներիս եռանդ և կյանքի լույս տուր, որը դու ես կրում: Օգնիր մեզ դպրոցի շեմքից դուրս թողնելու ունայնությունը, րոպեականը, մեր առօրյա կյանքի ամբողջ ծանրությունը: Մեզ սխրանքի տար մանկավարժության խավարի դեմ, որպեսզի հաղթանակի Լույսի Մանկավարժությունը:

43. Ուսմասվար, սիրելի՛ս:
Ինչի՞ց եք այդքան մտահոգ, որ չեք նկատում իմ բարեհամբույր ժպիտը:
Չէ՞ որ ես դասի եմ գնում, իսկ ձեր պատասխան քաջալերանքի ժպիտը իմ ստեղծականությանը թևեր կտա: Խնդրում եմ, դանդաղեցրեք ձեր քայլերը, ժպտացեք ինձ, սեղմեք իմ ձեռքը և հաջողություն մաղթեք: Ձեր ժպիտը կմիանա իմին, և իմ աշակերտների մոտ կրկնակի եռանդով, ուրախությամբ ես կգնամ, նրանց մոտ կգնամ ձեր և իմ անունից:
Բայց դուք այնքան մտահոգ տեսքով եք շտապում միջանցքով, որ բոլորը, ակամա, մի կողմ են քաշվում:
Իհարկե, դպրոցում ձեզ վրա հսկայական պատասխանատվություն է ընկած, շատ հոգսեր ունեք… Սակայն կա՞ դրանց մեջ ավելի կարևոր հոգս, քան այն, որ ուսուցիչներն ու աշակերտները ուրախանան ձեզ տեսնելով, և նրանցից յուրաքանչյուրն ընդունի Ձեր հիանալի ժպիտը՝ որպես հոգու ոգևորության լիցք:

Ուսմասվար, սիրելի՛ս…

45. Իմաստուներն զգուշացնում են.

- Ծաղրը ամենավնասակար դաստիարակն է, միայն նրբազգացությունն է քաղաքակրթության աստիճանը:
- Ճանապարհին ընկած քարերի նման են ծաղրանքը և հետապնդումները, միահյուսվում են անանցանելի մացառուտների:
- Պյութագորասն աշակերտներին արգելում էր ծաղրել, քանի որ դրանք ամենաշատն են խանգարում հաղիսավորությանը:

- Պետք է հեռու մնալ ծաղրանքից, որպես ամենավտանգավոր միջատներից:
- Ոչ մի ծաղրանք անպատասխան չի մնում:
- Աշակերտին ստորացնելը ճշգրիտ բումերանգ է:
- Ծաղրանքը նման է քարկոծության:
- Ծաղրանքի մայրը ստորությունն է:
- Սպարտայում Ծիծաղի տաճար կա, որտեղ շատ հիվանդություններ կարելի է բուժել: Ծաղրանքի տաճար, բարեբախտաբար, ոչ մի տեղ չկա:

- Կասկածամտությունը, անվստահությունը, մանրախնդրությունը, ծաղրանքը, վիրավորանքը, նվաստացումը, վրիժառությունը, հիշաչարությունը միևնույն մութ ընտանիքից են:
- Երբեք խորհուրդ չենք տա կեղծ ժպտալ:
- Այդ շինծու, կեղծավոր ժպիտներն անարժեք են:
- Մա՛րդ, երբեք մի՛ ստորացրու որևէ մեկին քո ծաղրանքով ու վիրավորանքով:

46. Իմաստուններն ասում են.
- Երջանիկ երգիչներ, փառաբանեք Արարչի Ժպիտը:
- Ժպիտ է պետք. լացը թուլացնում է ոգու ուժը:
- Ժպիտով ընդունեք հայտնված խիստ դպրոցը:
- Ժպիտի արևը ամպերի միջից փայլ է տալիս ծիածանին:
- Ժպիտով դիմավորենք վտանգը:
- Կարողացեք ժպիտով բացել ճանապարհի դուռը:
- Կարողացեք չնկատել Ձեր արիության հանդեպ ծաղրանքը, քանի որ գիտեք՝ ուր եք գնում:
- Պետք է ժպիտը աստղերին հղել:
- Ժպտացեք մոտեցող ակնթարթին: Հաստատվելով կայծերի փայլի մեջ՝ նրանց մեջ գտեք ժպիտը:
- Առանց նյարդայնանալու ժպիտով կարողացեք խուսափել հիմար խոսակցություններից:
- Ժպիտով կանխեք Տաճարի փլուզումը:
- Վճռականության Ժպիտն ամենալավ ուղեկիցն է:
- Իմացության Ժպիտը տապալում է դրված պատնեշները:
- Պարտիզպան, մոտեցիր և ժպիտով մաքրիր ծաղկաթերթի փոշին:

- Անհատականությունը դառնում է Տիեզերական գործողության ժպիտի արտացոլանքը, երբ նա իրեն համարում է գոյություն ունեցող, երևացող Տիեզերքի անբաժանելի մասը:
- Լռության և գեղեցկության մեջ ժպիտով սպասեք աշխարհում նոր մուտքերի:
- Սրտի ամեն մի զարկը ժպիտ է, արտասուք և ոսկի:
- Նվիրվածությունը աջակցության և կարեկցանքի ժպիտն է:
- Ժպտացեք երիտասարդներին, քանի որ նրանց համար եք կամուրջներ և ճամփաներ կառուցում:
- Հանգստությունը ուրախության ժպիտ է, անտարբերությունը՝ քմծիծաղ:
- Հարուստի ժպիտը մեծ արժեք չունի, բայց աղքատը, որը պահպանել է իր ժպիտը, կլինի Աստծու ուղեկից:

47. Աշակերտից

Ուսուցիչ իմ, ժպտացեք ինձ հիմա, քանի դեռ մեծանում եմ և Ձեր ժպիտի կարիքն ունեմ: Ես կժպտամ քեզ, երբ մեծանամ, և դու իմ ժպիտների կարիքը կունենաս:

Ռուսերենից թարգմանությունը Ավագ դպրոց-վարժարանի ուսումնական խմբի՝ Գևորգ Հակոբյանի (ղեկավար-խմբագիր), Արթուր Մանուչարյանի, Հասմիկ Ղազարյանի, Մարիամ Խաչատրյանի, Սեդա Սիմոնյանի